Խաղի Կանոնների բոլոր փոփոխությունների մանրամասները

Այստեղ նշված են Խաղի Կանոնների հիմնական փոփոխությունները: Յուրաքանչյուր փոփոխության համար տրված է հին ձևակերպումը (որտեղ կիրառելի է) և նոր/փոփոխված ձևակերպումը, որին հաջորդում է փոփոխության բացատրությունը:

«Հին տեքստ» վանդակում գրված տեքստը կարող է լինել ճշգրիտ հին տեքստը կամ հին տեքստի հիմնական իմաստը:

Կանոն 01 – Խաղադաշտը	
01.1 Արհեստական և բնական ծածկույթները չեն կարող համակցվել	
Հին տեքստ	**Նոր տեքստ**
Մրցումների անցկացման կանոնակարգի համաձայն, հանդիպումները կարող են անցկացվել բնական կամ արհեստական ծածկույթով խաղադաշտերում:	Խաղադաշտի խաղային ծածկույթը պետք է լինի ամբողջությամբ բնական, կամ, եթե մրցման կանոնակարգը թույլատրում է ամբողջությամբ արհեստական, բացառությամբ, եթե մրցումների կանոնակարգը թույլատրում է արհեստական և բնական նյութերի ինտեգրված համադրությունը (հիբրիդ համակարգ):

Բացատրություն

Հաստակեցվում է, որ անվտանգության նկատառումներով խաղադաշտում չի թույլատրվում բնական և արհեստական ծածկույթների զուգակցումը: Այլ ծածկույթ թույլատրվում է շրջակա տարածքներում, օրինակ արհեստական ծածկույթ մրցավարի օգնականների շարժման գոտիներում: Բնական և արհեստական նյութերի ինտեգրված համադրությունը թույլատրվում է:

01.2 Մրցման կանոնակարգը կարող է սահմանել եզրագծերի երկարությունը (Կանոն 1 – ում նշված պարամետրերի սահմաններում)
Ավելացված տեքստ
Մրցման կանոնակարգը կարող է սահմանել դարպասային և կողային գծերի երկարությունը վերը նշված չափերի սահմաններում:

Բացատրություն

Հստակեցվում է, որ յուրաքանչյուր մրցման կանոնակարգով կարող է սահմանվել տվյալ մրցման խաղերի համար կողային և դարպասային գծերի երկարությունը՝ Կանոն 1 - ում նշված չափերի սահմաններում:

01.3 Տեխնիկական գոտի

Բացատրություն

Տեխնիկական գոտու մասին ինֆորմացիան Կանոնների վերջնամասից տեղափոխվել է:

01.4 Դարպասային գծի տեխնոլոգիա /ԴԳՏ/

Բացատրություն

Դարպասային գծի տեխնոլոգիան /ԴԳՏ/ տեղափոխվել է Կանոն 10 - ից:

01.5 Կոմերցիոն գովազդ գետնին	
Հին տեքստ	**Նոր տեքստ**
Կոմերցիոն գովազդ որևէ տեսքով՝ իրական (ռեալ) կամ վիրտուալ չի թույլատրվում խաղադաշտում, դարպասացանցերով սահմանափակված տարածքում, տեխնիկական գոտում կամ խաղադաշտի կողային գծերին 1մ-ից (1 յարդ) մոտ տարածքներում այն պահից, երբ թիմերը մտնում են խաղադաշտ …	Կոմերցիոն գովազդ որևէ տեսքով՝ իրական (ռեալ) կամ վիրտուալ չի թույլատրվում խաղադաշտում, դարպասացանցերով սահմանափակված տարածքում, տեխնիկական գոտում կամ խաղադաշտի <u>եզրագծերին</u> 1մ-ից (1 յարդ) մոտ՝ գետնին, այն պահից, երբ թիմերը մտնում են խաղադաշտ…

Բացատրություն

Հստակեցվում է կոմերցիոն գովազդների սահմանափակումը գետնին՝ դարպասային և կողային գծերից դուրս ընկած տարածքներում:

01.6 Տարբերանշաններ (լոգոներ) ու խորհրդանիշեր անկյունային դրոշների վրա	
Հին տեքստ	**Նոր տեքստ**
Խաղի ընթացքում արգելվում է վերարտադրել՝ ռեալ կամ վիրտուալ ՖԻՖԱ-ի, կոնֆեդերացիաների, անդամ ասոցիացիաների, լիգաների, ակումբների կամ այլ մարմինների ներկայացուցչական տարբերանշանները (լոգոները) կամ խորհրդանիշերը խաղադաշտի վրա, դարպասացանցերին և դրանցով սահմանափակված տարածքներում, դարպասներին, անկյունային դրոշակաձողերին ու դրանց դրոշներին:	Խաղի ընթացքում արգելվում է վերարտադրել՝ ռեալ կամ վիրտուալ ՖԻՖԱ-ի, կոնֆեդերացիաների, <u>ազգային ֆուտբոլային</u> ասոցիացիաների, <u>մրցումների</u>, ակումբների կամ այլ մարմինների ներկայացուցչական տարբերանշանները (լոգոները) կամ խորհրդանիշերը խաղադաշտի վրա, դարպասացանցերին և դրանցով սահմանափակված տարածքներում, դարպասներին և անկյունային դրոշակաձողերին: <u>Դրանք թույլատրվում են դրոշակաձողերին ամրացված դրոշների վրա</u>:

Բացատրություն

- **Ազգային ֆուտբոլային ասոցիացիաները** փոխարինել են **անդամ ասոցիացիաներին**
- **մրցումները** փոխարինել են **լիգաներին**, քանի որ այս ձևակերպումը չէր համապատասխանում գավաթային մրցումներին:
- Տարբերանշաններով (լոգոներով) անկյունային դրոշներն արդեն լայն կիրառում ունեն, բացի այդ դրանց թույլատրելը համահունչ կլինի Կանոն 2 – ի հետ, ըստ որի թույլատրում է տարբերանշաններ (լոգոներ) տեղադրել գնդակի վրա:

Կանոն 02 – Գնդակը

Փոփոխություններ չկան

Կանոն 03 – Խաղացողները

03.1 Վերնագրի փոփոփոխում	
Հին վերնագիր	**Նոր վերնագիր**
Խաղացողների քանակը	<u>Խաղացողները</u>

Բացատրություն

Նոր վերնագիրն արտացոլում է, որ կանոնի բովանդակությունը վերաբերվում է նաև փոխարինողներին և այլն:

03.2 Խաղացողների նվազագույն քանակ	
Հին տեքստ	**Նոր տեքստ**
Հանդիպումը չի կարող սկսվել, եթե թիմերից որևէ մեկի կազմում կա յոթից պակաս ֆուտբոլիստ: (…) չնայած խաղը չի կարող ՍԿՍՎԵԼ, եթե թիմերից մեկը բաղկացած է 7-ից պակաս խաղացողներից, այնուամենայնիվ, խաղը ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ համար խաղացողների նվազագույն քանակի սահմանումը թողնվում է անդամ ասոցիացիաների հայեցողությանը: Ինչևիցե, Միջազգային Խորհրդի կարծիքով, խաղը չի կարող շարունակվել, եթե թիմերից մեկի կազմում կա 7-ից պակաս խաղացող:	Խաղը չի կարող սկսվել <u>կամ շարունակվել</u>, եթե թիմերից մեկի կազմում կա 7-ից պակաս խաղացող:

Բացատրություն

Խաղը շարունակելու համար խաղացողների նվազագույն քանակի մասին Ֆուտբոլային Ասոցիացիայի Միջազգային Խորհրդի (IFAB) մինչ այժմ տված խորհուրդը դառնում է Կանոն: Դա համահունչ է խաղը սկսելու համար խաղացողների նվազագույն քանակի հետ:

03.3 Խաղի վերսկսումներ փոխարինողների կողմից	
Հին տեքստ	**Նոր տեքստ**
Փոխարինողը, ով չի ամբողջացրել փոխարինման ընթացակարգը՝ չմտնելով խաղադաշտ, չի կարող վերսկսել խաղը կողագծից նետումով կամ անկյունային հարվածով:	<u>Փոխարինողները կարող են կատարել խաղի ցանկացած վերսկսում, պայմանով, որ նրանք սկզբից մտնեն</u> խաղադաշտ:

Բացատրություն

Հստակեցվում է, որ փոխարինողը, ով ոտք է դրել խաղադաշտ դրանից հետո կարող է կատարել խաղի ցանկացած վերսկսում, ներառյալ անկյունային հարված և կողագծից նետում: Ոմանք սխալ էին մեկնաբանում «հին» ձևակերպումը, ասելով, որ խաղը պետք է վերսկսվի, որից հետո միայն փոխարինողը կարող է կատարել խաղի հաջորդ վերսկսումները:

03.4 Արձանագրված փոխարինողը սկսում է խաղը արձանագրված խաղացողի փոխարեն	
Հին տեքստ	**Նոր տեքստ**
Եթե խաղասկզբին արձանագրությունում նշված փոխարինողը մտնում է խաղադաշտ արձանագրությունում նշված հիմնական խաղացողի փոխարեն և մրցավարը տեղեկացված չէ այս փոփոխության մասին. • մրցավարը թույլատրում է արձանագրությունում նշված փոխարինողին շարունակել խաղը (…)	Եթե խաղասկզբին արձանագրությունում արձանագրված փոխարինողը <u>սկսում է</u> խաղը արձանագրված խաղացողի փոխարեն և մրցավարը տեղեկացված չէ այս փոփոխության մասին ապա. • մրցավարը թույլատրում է արձանագրված փոխարինողին շարունակել խաղը (…)

Բացատրություն

Հստակեցվում է, որ եթե մինչ խաղի սկիզբը արձանագրությունում արձանագրված խաղացողը «փոխարինվել է» արձանագրված փոխարինողով, ապա այդ խաղացողը ժամանելուց հետո կարող է հանդես գալ որպես փոխարինող: Այս փոփոխության կարիքն ավելի ցայտուն է երևում, երբ խաղի սկզբնահարվածն ավելի շուտ է կատարվում քան փոխարինողը մտնում է խաղադաշտ:

03.5 Լրացուցիչ անձիք խաղադաշտում – հեռացված խաղացողի կարգավիճակ	
Հին տեքստ	**Նոր տեքստ**
Որևէ մեկը, ով գրանցված չէ թիմի հայտում որպես խաղացող, փոխարինող կամ թիմի պաշտոնյա, համարվում է կողմնակի անձ, ինչպիսին նաև խաղադաշտից հեռացված խաղացողն է:	<u>Որևէ մեկը, ով արձանագրված չէ արձանագրությունում որպես թիմի խաղացող, փոխարինող կամ պաշտոնյա, համարվում է կողմնակի անձ:</u>

Բացատրություն

Եթե հեռացված խաղացողը խախտում է կատարում, ապա ավելի տրամաբանական է նրա նկատմամբ կիրառել նույն պատժամիջոցները՝ ինչը կկիրառվեր, եթե նույնը կատարեր փոխարինողը: Հետևաբար, եթե հեռացված խաղացողը վերադառնում է խաղադաշտ, ապա նա պետք է պատժվի տուգանային / ազատ հարվածով:

03.6 Փոխարինողների կամ թիմի պաշտոնյաների կողմից կատարված խախտումներ	
Հին տեքստ	**Նոր տեքստ**
Եթե փոխարինողը կամ փոխարինված խաղացողը խաղադաշտ է մտնում առանց մրցավարի թույլտվության, ապա. • եթե մրցավարն ընդհատել է խաղը, այն վերսկսվում է ազատ հարվածով (…) Եթե թիմի պաշտոնյան մտնում է խաղադաշտ. • եթե մրցավարը կանգնեցրել է խաղը, նա պետք է վերսկսի այն «վիճաբանական գնդակ»-ի նետումով (…)	Եթե խաղը կանգնեցվել է, քանի որ միջամտություն է կատարվել. • թիմի պաշտոնյայի, փոխարինողի, փոխարինված կամ հեռացված խաղացողի կողմից, ապա խաղը պետք է վերսկսվի տուգանային կամ 11 մետրանոց հարվածով:

Բացատրություն

Սկսել են շատանալ այն դեպքերը, երբ փոխարինողները / թիմի պաշտոնյաները մտնում են խաղադաշտ խաղին միջամտելու կամ մրցակցին խանգարելու համար, օրինակ գոլը կանխելու համար: Սա ակնհայտորեն «անարդար» է և տուգանային հարվածը (կամ 11 մետրանոց հարվածը, եթե սեփական տուգանային հրապարակում է) ավելի համապատասխան պատիժ է:

03.7 Խաղացող ով հեռացվել է մինչ սկզբնահարվածը կամ դրանից հետո
Ավելացված տեքստ
Խաղացողը, ով հեռացվել է. • մինչ թիմի կազմի ներկայացնելը, հետագայում ընդհանրապես չի կարող այնտեղ արձանագրվել • մինչ սկզբնահարվածը՝ թիմի կազմում նշված լինելուց հետո, կարող է փոխարինվել կազմում նշված փոխարինողով (ում փոխարեն այլ անձ այլևս չի կարող արձանագրվել) • սկզբնահարվածից հետո, չի կարող փոխարինվել

Բացատրություն

Հստակեցվում է, թե երբ հեռացված խաղացողը կարող է փոխարինվել:

03.8 Դեպի դարպասը գնացող գնդակի վրա ազդեցությունը, երբ դրան դիպչում է փոխարինողը / թիմի պաշտոնյան / կողմնակի անձը	
Հին տեքստ	**Նոր տեքստ**
3.6 կետում նկարագրված իրավիճակներում, մրցավարը պետք է կանգնեցնի խաղը, եթե «կարգազանցը» միջամտում է խաղին կամ դիպչում է գնդակին Եթե կողմնակի անձ է մտնում խաղադաշտ. • մրցավարը պետք է կանգնեցնի խաղը (ոչ անմիջապես, եթե կողմնակի անձը չի միջամտում խաղին),	<u>Եթե միջամտությունը չի խանգարում պաշտպանվող խաղացողին խաղալու գնդակ, որն ընթանում է դեպի դարպասը և գոլ է մտնում, ապա գոլն արձանագրվում է (նույնիսկ եթե գնդակի հետ հպում է եղել), բացառությամբ եթե գնդակը մտնում է մրցակցի դարպասը:</u>

Բացատրություն

Այս փոփոխությունը կատարվել է **«արդար խաղի»** սկզբունքները պաշտպանելու համար: Այսպիսով, մրցավարը կարող է արձանագրել գոլը կիրառելով առավելություն տալու սկզբունքը, եթե գոլը կանխելու անհաջող փորձ է կատարվել (տես 3.9):

03.9 Դարպասի գրավում, երբ լրացուցիչ անձ կա խաղադաշտում	
Հին տեքստ	**Նոր տեքստ**
Եթե դարպասի գրավումից հետո, մրցավարը նկատում է՝ նախքան խաղը վերսկսելը, որ լրացուցիչ անձ է եղել խաղադաշտում՝ դարպասի գրավման ժամանակ. • մրցավարը պետք է չարձանագրի գոլը, եթե. ➢ լրացուցիչ անձը եղել է կողմնակի անձ և միջամտել է խաղին, ➢ լրացուցիչ անձը եղել է դարպասը գրավող թիմի խաղացող, փոխարինող, փոխարինված խաղացող կամ թիմի պաշտոնյա	Եթե դարպասի գրավումից հետո, նախքան խաղը վերսկսելը, մրցավարը նկատում է, որ լրացուցիչ անձ (անձիք) է եղել խաղադաշտում՝ դարպասի գրավման ժամանակ, ապա. • մրցավարը պետք է չարձանագրի գոլը, եթե լրացուցիչ անձը եղել է. ➢ դարպասը գրավող թիմի խաղացող, փոխարինող, փոխարինված, հեռացված խաղացող կամ թիմի պաշտոնյա ➢ կողմնակի անձ, ով միջամտել է խաղին, <u>բացառությամբ, եթե գոլը խփվել է ըստ «Լրացուցիչ անձիք խաղադաշտում» ենթավերնագրի նկարագրության:</u> Խաղը պետք է վերսկսվի դարպասից հարվածով, անկյունային հարվածով կամ «վիճաբանական գնդակի» նետումով: <u>Եթե գոլ խփվելուց հետո խաղը վերսկսվել է և միայն դրանից հետո է մրցավարը հասկացել, որ գոլ խփելիս խաղադաշտում լրացուցիչ անձ է եղել, ապա գոլը չի կարող չեղյալ</u>

	հայտարարվել: Եթե լրացուցիչ անձը դեռ խաղադաշտում է, ապա մրցավարը պետք է. • կանգնեցնի խաղը • դուրս հանի լրացուցիչ անձին խաղադաշտից • վերսկսի խաղը համապատասխանաբար՝ «վիճաբանական գնդակի» նետումով կամ ազատ հարվածով: Մրցավարը պետք է ներկայացնի զեկուցագիր համապատասխան մարմիններին:

Բացատրություն

- Փոփոխությունը համահունչ է 3.8 կետում սահմանված սկզբունքներին
- Հստակեցվում է, թե ինչպես է պետք վերսկսել խաղը գոլ խփվելուց հետո, երբ խաղադաշտում լրացուցիչ անձ է եղել և խաղը դեռ չի վերսկսվել:
- Հստակեցվում է, որ եթե գոլ խփելիս խաղադաշտում լրացուցիչ անձ է եղել, բայց խաղն արդեն վերսկսվել է, ապա մրցավարը չի կարող չեղյալ հայտարարել գոլը կամ «զրոյացնել» գոլից մինչև լրացուցիչ անձին հայտնաբերելու միջև ընկած ժամանակահատվածը, այլ պետք է թույլ ատրի շարունակել խաղը:

03.10 Նշում թիմի ավագի վերաբերյալ (Կանոն 12 -ից)
Լրացուցիչ տեքստ
Թիմի ավագը չունի որևէ հատուկ կարգավիճակ կամ առավելություններ, սակայն ունի որոշակի պատասխանատվություն իր թիմի վարքագծի համար:

Բացատրություն

Ավելի տրամաբանական է, որ այս սահմանումը լինի Կանոն 3 – ում քան Կանոն 12 - ում:

Կանոն 04 – Խաղացողների հանդերձանքը	
04.1 Կպչուն ժապավեն / ծածկող նյութ / ծածկող գուլպաներ	
Հին տեքստ	**Նոր տեքստ**
Խաղացողի հիմնական պարտադիր հանդերձանքի բաղկացուցիչներն են. (…) • զանկապաններ - եթե տեսանելի կպչուն ժապավեն կամ նմանատիպ նյութ է օգտագործվում, ապա այն պետք է լինի զանկապանի տվյալ մասի գույնի	• գուլպաներ - կպչուն ժապավեն կամ զանկազած նյութ օգտագործելիս կամ կրելիս այն պետք է լինի գուլպայի այն մասի գույնի, որտեղ այն կիրառվում է կամ, որն այն ծածկում է

Բացատրություն

Հստակեցվում է, որ ոչ կպչուն նյութերը պետք է լինեն գուլպայի այն մասի գույնի, որը դրանք ծածկում են, քանի որ որոշ խաղացողներ կրում են կիսագուլպաներ, որոնք գույնով տարբերվում են գուլպաներից:

04.2 Խաղակոշիկի և սրնքակալի կորուստ	
Հին տեքստ	**Նոր տեքստ**
Եթե խաղացողը պատահաբար կորցնում է խաղակոշիկը և անմիջապես խաղում է գնդակ և/կամ գոլ է խփում (…) (…) գոլն արձանագրվում է:	Խաղացողը, ով պատահաբար կորցնում է խաղակոշիկը կամ սրնքակալը պետք է հագնի դա հնարավորինս շուտ՝ ոչ ուշ քան մոտակա խաղադադարը: Եթե մինչ այդ խաղացողը խաղում է գնդակ և/կամ գոլ է խփում, ապա գոլն արձանագրվում է:

Բացատրություն

Ավելի պարզ է մատնանշվում, որ խաղացողը պետք է հնարավորինս արագ հագնի խաղակոշիկը ՝ ոչ ուշ քան մոտակա խաղադադարը: Տրամաբանական է կիրառել այս սկզբունքը սրնքակալների համար:

04.3 Ներքնահագուստների գույներ	
Հին տեքստ	**Նոր տեքստ**
Խաղացողի հիմնական պարտադիր հանդերձանքի բաղկացուցիչներն են. • շապիկ կամ մարզաշապիկ թևքերով - եթե կրում են ներքնաշապիկ, ապա դրա թևքերը պետք է լինեն շապիկի կամ մարզաշապիկի հիմնական գույնի, • վարտիք - եթե կրում են ներքնավարտիք, ապա այն պետք է լինի վարտիքի հիմնական գույնի	Խաղացողի պարտադիր հանդերձանքի բաղկացուցիչներն են. • թևքերով մարզաշապիկը • վարտիքը Ներքնաշապիկները պետք է լինեն մարզաշապիկի թևքերի հիմնական գույնի: Ներքնավարտիքները պետք է լինեն վարտիքի հիմնական գույնի <u>կամ վարտիքի ամենաներքևի մասի գույնի: Նույն թիմի խաղացողները պետք է կրեն միևնույն գույնի ներքնավարտիքներ:</u>

Բացատրություն

- **Ներքնաշապիկները** փոխարինում են **ներքնահագուստներին**:
- Արտադրողներն այժմ պատրաստում են տարբեր գույնի ներքևի մասով (եզրով) վարտիքներ: Կանոնի փոփոխությունը ընտրության հնարավորություն է տալիս, որ ներքնավարտիքները լինեն վարտիքի հիմնական կամ «եզրի» գույնի, բայց թիմը պետք է կրի նույն գույնի ներքնավարտիքներ:

04.4 Գլխարկներ	
Հին տեքստ	**Նոր տեքստ**
Ոչ վտանգավոր պաշտպանիչ հանդերձանք կրելը (…) թույլատրվում է, օրինակ՝ սպորտային ակնոցներ:	Ոչ վտանգավոր պաշտպանիչ հանդերձանք կրելը (…) թույլատրվում է, օրինակ. <u>դարպասապահների գլխարկներ</u> և սպորտային ակնոցներ:

Բացատրություն

Դարպասապահների գլխարկները ներառվել են տեքստում և դրանց կիրառումը թույլատրվել է Կանոններով:

04.5 էլեկտրոնային հաղորդակցություն խաղացողների հետ (ներառյալ փոխարինողները)	
Հին տեքստ	**Նոր տեքստ**
Արգելվում է խաղացողների և/կամ տեխնիկական անձնակազմի միջև էլեկտրոնային հաղորդակցության օգտագործումը:	Արգելվում է խաղացողների (ներառյալ փոխարինողների / փոխարինված խաղացողների) և/կամ տեխնիկական անձնակազմի միջև էլեկտրոնային հաղորդակցության օգտագործումը:

Բացատրություն

Հստակեցվում է, որ արգելվում է էլեկտրոնային հաղորդակցությունը փոխարինողների հետ:

04.6 Հանդերձանքը փոխելուց / կարգի բերելուց հետո խաղադաշտ վերադարձող խաղացող	
Հին տեքստ	**Նոր տեքստ**
Այս կանոնի ցանկացած խախտման դեպքում (…). • ցանկացած խաղացող, որին մրցավարը հրահանգել է թողնել խաղադաշտը՝ հանդերձանքն ուղղելու համար, չպետք է վերադառնա առանց մրցավարի թույլտվության, • մրցավարը ստուգում է խաղացողի հանդերձանքը՝ նախքան խաղադաշտ վերադառնալու թույլտվություն տալը, • խաղացողին թույլատրվում է վերադառնալ խաղադաշտ միայն, երբ գնդակը խաղի մեջ չէ:	Խաղացողը, ով թողնում է խաղադաշտը հանդերձանքը կարգի բերելու կամ փոխելու համար, պետք է. • մինչ վերադառնալու թույլտվություն ստանալը ստուգվի (հանդերձանքը) խաղի պաշտոնյայի կողմից, • վերադառնա խաղադաշտ միայն մրցավարի թույլտվությամբ (որը կարող է տրվել նաև խաղի ընթացքում)

Բացատրություն

Կանոնը չէր հստակեցնում, թե խաղացողը, ով որոշել էր դուրս գալ խաղադաշտից (խաղակոշիկը փոխելու համար) արդյոք կարող էր վերադառնալ խաղադաշտ խաղի ընթացքում: Նոր ձևակերպումը թույլ է տալիս 4-րդ պաշտոնյային / մրցավարի օգնականին ստուգելու հանդերձանքը: Անկախ խաղադաշտից դուրս գալու պատճառից, տվյալ խաղացողը դիտվում է այնպես ինչպես վնասվածքից հետո վերադարձող խաղացողը: Սա ավելի լավ է խաղի համար և նվազեցնում է հակասությունները / անհամաձայնությունները:

Կանոն 05 – Մրցավարը
05.1 Մրցավարի որոշումները – կարծիք և հայեցողություն
Լրացուցիչ տեքստ
Մրցավարը օգտագործելով իր լավագույն որակները, կկայացնի որոշումներ համաձայն Խաղի Կանոնների և «խաղի ոգու»: Այդ որոշումներ հիմնված կլինեն մրցավարի կարծիքի վրա, որն իրավասու է Խաղի Կանոնների սահմաններում՝ գործել իր հայեցողությամբ:

Բացատրություն

Կանոններում հաճախակի էր օգտագործվում «մրցավարի կարծիքով» և «մրցավարի հայեցողությամբ» արտահայտությունները: Այս սահմանումով վերանում է այդ արտահայտությունների հաճախակի օգտագործման անհրաժեշտությունը: Կանոններում ավելանում է նաև «խաղի ոգու» գաղափարը:

05.2 Մրցավարի որոշումներ -դեպքեր, երբ որոշումները չեն կարող փոխվել	
Հին տեքստ	**Նոր տեքստ**
Մրցավարը կարող է փոխել որոշումը միայն այն դեպքում, երբ գիտակցում է, որ այն սխալ է, կամ, իր հայեցողությամբ, մրցավարի օգնականի կամ չորրորդ պաշտոնյայի խորհրդով, եթե նա հանդիպումը չի վերսկսել կամ ավարտել:	Մրցավարը գիտակցելով իր սխալը՝ ինքնուրույն կամ խաղի այլ պաշտոնյայի խորհրդից հետո, չի կարող փոխել իր որոշումը, եթե խաղն արդեն վերսկսվել է կամ ինքն ազդարարել է առաջին կամ երկրորդ խաղակեսի ավարտը (ներառյալ լրացուցիչ ժամանակը, երբ այն խաղացվում է) և թողել է խաղադաշտը կամ ավարտել է խաղը:

Բացատրություն

Հստակեցվում է, որ եթե մրցավարն ազդարարում է խաղակեսի ավարտը և թողնում է խաղադաշտը, ապա նա չի կարող փոխել իր որոշումը նույնիսկ եթե հանդերձարանում պարզվում է, որ կայացվել է սխալ որոշում:

05.3 Միաժամանակ կատարված մի քանի խախտումներ	
Հին տեքստ	**Նոր տեքստ**
• մրցավարը պետք է պատժի առավել լուրջ խախտումը, եթե խաղացողը (կամ նույն թիմի խաղացողներ) միաժամանակ կատարում է մեկից ավելի խախտումներ • տարբեր թիմերի խաղացողների կողմից կատարված խախտումներ. մրցավարը պետք է կանգնեցնի խաղը և այն վերսկսի «վիճաբանական գնդակի» նետումով	• եթե միաժամանակ կատարվում են մեկից ավելի խախտումներ, <u>ապա մրցավարը պետք է պատժի առավել լուրջ խախտումը՝ հաշվի առնելով կիրառվելիք պատժամիջոցը, խաղի վերսկսումը, ֆիզիկական ուժի կիրառման չափը և տակտիկական նկատառումները</u>

Բացատրություն

Քանի որ պետք է պատժվի ամենալուրջ խախտումը, ապա դա չպետք է կախված լինի թիմի (թիմերի) խաղացողների քանակից: Նույն փոփոխությունը ներառված է նաև Կանոն 14 – ում:

05.4 Կարգապահական պատժամիջոց կիրառելու իրավունքը՝ սկսած խաղադաշտի մինչխաղային ստուգումից (տես 12.8)	
Հին տեքստ	**Նոր տեքստ**
Մրցավարն իրավասու է կարգապահական պատժամիջոցներ կիրառել այն պահից սկսած, երբ մտնում է խաղադաշտ, մինչ եզրափակիչ սուլիչից հետո այն լքելը:	• մրցավարն իրավասու է կարգապահական պատժամիջոցներ կիրառել <u>մինչխաղային ստուգման համար</u> խաղադաշտ մտնելու պահից սկսած, <u>մինչ եզրափակիչ սուլիչից հետո այն թողնելը (ներառյալ 11 մետրանոց հարվածաշարը): Եթե խաղացողը, մինչ խաղի սկիզբը խաղադաշտ մտնելը, կատարում է հեռացման արժանի խախտում, ապա մրցավարն իրավասու է թույլ չտալ նրան մասնակցելու խաղին (տես 3.6): Մրցավարը պետք է զեկուցագիր ներկայացնի ցանկացած ոչ պատշաճ վարքագծի դրսևորման դեպքում:</u>

Բացատրություն

Նոր ձևակերպումը հստակեցնում է, թե որ պահից է սկսում մրցավարի լիազորությունները: Կանոն 12 – ում նշված ձևակերպումը վերաբերվում է մինչ նախախաղային նախավարժանքն ընկած ժամանակահատվածին,երբ դեռ թիմերը միասին դուրս չեն եկել խաղադաշտ: Օրինակի համար տրամաբանական է, որ թունելում կամ նախախաղային նախավարժանքի ժամանակ միմյանց հետ կռվող երկու խաղացողներ չթույլատրվեն մասնակցելու խաղին, քանի որ դա ռիսկի տակ կդնի խաղի ղեկավարումը և ընդհանրապես կխանգարի խաղի անցկացմանը:

Մրցավարը խաղադաշտի մինչխաղային ստուգման ժամանակ կարող է պահանջել փոփոխել գծանշումները և այլն, հետևաբար տրամաբանական է ընդունել, որ այդ պահից սկսած նա իրավունք ունի նաև խաղացող հեռացնել: Այն խախտումները, որոնք հեռացման արժանի չեն պետք է ներկայացվեն զեկուցագրով: Այսպիսով խաղին նախորդող ժամանակահատվածում դեղին քարտերը չեն կարող տրվել կամ խաղի ընթացքում հաշվի առնվել (տես նաև 12.8):

05.5 Կարմիր և դեղին քարտեր ցույց տալու լիազորություն	
Հին տեքստ	**Նոր տեքստ**
Մրցավարն իրավասու է ցույց տալ դեղին կամ կարմիր քարտեր խաղամիջյան ընդմիջման ընթացքում և խաղից հետո, ինչպես նաև լրացուցիչ ժամանակի և 11 մետրանոց հարվածաշարի ընթացքում, քանի որ նշված ժամանակահատվածներում խաղն իր իրավասության տակ է:	• Մրցավարն իրավունք ունի ցույց տալու կարմիր և դեղին քարտեր այն պահից, <u>երբ խաղասկզբին մտնում է խաղադաշտ մինչև խաղի ավարտից հետո խաղադաշտից դուրս գալը, ներառյալ խաղամիջյան ընդմիջումը, լրացուցիչ ժամանակը և 11 մետրանոց հարվածաշարը:</u>

Բացատրություն

Հստակեցվում է (5.4 կետ), որ մրցավարը կարող է օգտագործել կարմիր և դեղին քարտեր միայն խաղասկզբին խաղադաշտ մտնելուց հետո:

05.6 Դեղին/կարմիր քարտով պատժվող խախտումից հետո, խաղացողը կարող է խաղադաշտում ստանալ արագ բուժօգնություն/ բուժզննում
Հին տեքստ
Մրցավարը … … ընդհատում է խաղը, եթե, իր կարծիքով, խաղացողը ստացել է լուրջ վնասվածք և ապահովում նրա դուրս բերումը խաղադաշտից: Վնասվածք ստացած խաղացողը կարող է խաղադաշտ վերադառնալ միայն խաղը վերսկսելուց հետո (…) Բացառություններ այս ընթացակարգում կարող են արվել, երբ. • վնասվածք է ստացել դարպասապահը, • բախվել են դարպասապահն ու խաղադաշտի խաղացող և անհապաղ օգնության կարիք ունեն • բախվել են նույն թիմի խաղացողներ և անհապաղ օգնության կարիք ունեն • լուրջ վնասվածք է տեղի ունեցել
Ավելացված տեքստ
• <u>եթե խաղացողը վնասվածք է ստացել ֆիզիկական հպումով խախտման հետևանքով, որի համար մրցակիցը զգուշացվել կամ հեռացվել է (օրինակ՝ անգիտակցորեն կամ կանոնների լուրջ խախտումով պայքար) և եթե բուժօգնությունը/ բուժզննումը կկատարվի արագ:</u>

Բացատրություն

Ակնհայտորեն ազնիվ չէ, երբ խաղացողը, ով վնասվածք է ստացել է լուրջ խախտման արդյունքում, մարզչի/բժշկի խաղադաշտ մտնելուց հետո թողնում է այն, խախտում կատարող թիմին տալով քանակային առավելություն (տես պրակտիկ ուղեցույցները):

05.7 Ազդեցությունը, երբ կողմնակի անձը հպվում է դեպի դարպասը ընթացող գնդակին	
Հին տեքստ	
Եթե խաղի ժամանակ լրացուցիչ գնդակ, այլ իր կամ կենդանի է մտնում խաղադաշտ, ապա մրցավարը պետք է. • կանգնեցնի խաղը միայն, եթե այն միջամտում է խաղին: Խաղը պետք է վերսկսվի «վիճաբանական գնդակ»-ի նետումով:	Եթե խաղի ժամանակ լրացուցիչ գնդակ, այլ իր կամ կենդանի է մտնում խաղադաշտ, ապա մրցավարը պետք է. • կանգնեցնի խաղը (և վերսկսի «վիճաբանական գնդակ»-ի նետումով) միայն, եթե միջամտությունը խանգարում է խաղին, բացառությամբ, <u>եթե միջամտությունը չի խանգարում պաշտպանվող խաղացողին խաղալու գնդակ, որն ընթանում է դեպի դարպասը և գոլ է մտնում: Այդ դեպքում գոլն արձանագրվում է (նույնիսկ եթե գնդակի հետ հպում է եղել), բացառությամբ եթե գնդակը մտնում է պաշտպանի մրցակցի դարպասը:</u>

Բացատրություն

Սա համապատասխանեցնում է Կանոն 5-ը Կանոն 3-ի փոփոխության հետ (տես 3.8):

05.8 Մրցավարի հանդերցանք
Ավելացված տեքստ
<u>Պարտադիր հանդերցանք</u> • <u>Սուլիչ (ներ)</u> • <u>Ժամացույց(ներ)</u> • <u>Կարմիր և դեղին քարտեր</u> • <u>Նոթատետր(կամ այլ բան խաղի հետ կապված նշումներ կատարելու համար)</u> <u>Այլ հանդերցանք</u> <u>Մրցավարին կարող է թույլատրվել՝ օգտագործել</u> • <u>Խաղի այլ պաշտոնյաների հետ հաղորդակցվելու պարագաներ-բիպ ազդանշանով դրոշակներ, ականջակալներ և այլն</u> • <u>Ֆիզպատրաստականությունը վերահսկող EPTS կամ այլ պարագաներ</u> • <u>Մրցավարներին և խաղի այլ պաշտոնյաներին արգելվում է կրել զարդեղեն և այլ էլեկտրոնային պարագաներ:</u>

Բացատրություն

- Այս ձևակերպումը Կանոն 4-ից տեղափոխվել է Կանոն 5 և հստակեցնում է թե ինչ հանդերձանք/ պարագաներ պետք է կամ կարող է կրել խաղի պաշտոնյան:

Կանոն 06 – Խաղի այլ պաշտոնյաներ	
06.1 Վերնագրի փոփոփոխում	
Հին վերնագիր	**Նոր վերնագիր**
Մրցավարի օգնականը	Խաղի այլ պաշտոնյաներ

Բացատրություն

Խաղի այլ պաշտոնյաների (մրցավարի օգնականներ, 4-րդ պաշտոնյա, մրցավարի լրացուցիչ օգնականներ և մրցավարի պահեստային օգնական) պարտականությունները այժմ ներառված են այս Կանոնում:

06.2 Մրցավարի լիազորությունները խաղի այլ պաշտոնյաների վրա
Ավելացված տեքստ
Խաղի պաշտոնյաներն աշխատում են մրցավարի ղեկավարությամբ:

Բացատրություն

Ընդգծվում է մրցավարի առաջնային դերը:

06.3 Խաղի այլ պաշտոնյաների օգնությունը մրցավարին
Ավելացված տեքստ
Խաղի պաշտոնյաներն օգնում են մրցավարին ստուգելու խաղադաշտը, գնդակները, խաղացողների հանդերձանքը (ներառյալ այն կարգի բերելուց հետո ստուգելը), կատարում գրառումներ՝ կապված ժամանակի, գոլերի, ոչ պատշաճ վարքագծի դրսևորման վերաբերյալ և այլն:

Բացատրություն

Այս ձևակերպումով ընդհանրացված նշվում է խաղի այլ պաշտոնյաների օգնությունը մրցավարին, հնարավորություն տալով խուսափել դա կրկնելուց Կանոններում՝ յուրաքանչյուր պաշտոնյային վերաբերվող բաժնում:

06.4 Ընթացակարգ, երբ խաղի պաշտոնյան ի վիճակի չէ կատարել իր պարտականությունները	
Հին տեքստ	**Նոր տեքստ**
Մինչև մրցման սկիզբը, կազմակերպիչը հստակորեն սահմանում է, եթե մրցավարն ի վիճակի չէ շարունակել իր պարտականությունները, արդյոք, չորրորդ պաշտոնյա՞ն է ստանձնում այդ դերը, թե՞ մրցավարի առաջին օգնականը կամ մրցավարի առաջին լրացուցիչ օգնականը, իսկ չորրորդ պաշտոնյան դառնում է մրցավարի օգնական	Մրցման կանոնակարգը պետք է հստակ սահմանի, թե ով պետք է փոխարինի այն խաղի պաշտոնյային ով ի վիճակի չէ սկսել կամ շարունակել խաղը: Պետք է հստակեցվի նաև դրանից բխող փոփոխությունները: Մասնավորապես պետք է պարզ լինի թե ով է ստանձնելու մրցավարի դերը, երբ նա ի վիճակի չէ սկսել կամ շարունակել խաղը՝ չորրորդ պաշտոնյա՞ն, մրցավարի առաջին օգնակա՞նը, թե՞ մրցավարի առաջին լրացուցիչ օգնականը:

Բացատրություն

Ձևակերպումը պարզեցված է և հնարավորություն է տալիս չնկարագրել յուրաքանչյուր իրավիճակ:

06.4 Չորրորդ պաշտոնյայի պարտականությունները
Ավելացված տեքստ
Չորրորդ պաշտոնյան (…) միշտ օգնում է մրցավարին. • ստուգելով խաղացողների / փոխարինողների հանդերձանքը (…) • ցույց տալով այն նվազագույն ժամանակը, որը մրցավարը մտադիր է ավելացնել յուրաքանչյուր խաղակեսին (ներառյալ լրացուցիչ ժամանակը)

Բացատրություն

Ավելացվել է սովորաբար չորրորդ պաշտոնյայի կողմից կատարվող աշխատանքը:

Կանոն 07 – Խաղի տևողությունը
07.1 Ավելացված ժամանակ
Ավելացված տեքստ
Մրցավարը յուրաքանչյուր խաղակեսին փոխհատուցում է այն ժամանակը, որը կորսվել է այդ խաղակեսի ընթացքում՝ հաշվի առնելով. • <u>վնասվածք ստացած խաղացողների բուժգննումը և / կամ խաղադաշտից դուրս բերումը (…)</u> • <u>ջրադադարները կամ բժշկական նպատակով կատարված դադարները, որոնք թույլատրված են մրցման կանոնակարգով</u>

Բացատրություն

Ավելացված ժամանակում ներառվել են հաճախակի հանդիպող այս պատճառները: Մասնավորապես ավելացվել և Կանոններով օրենքի ուժ են ստացել «ջրադադարները»:

Կանոն 08 – Խաղի սկսումը և վերսկսումը
08.1 Բոլոր վերսկսումների ներառումը
Ավելացված տեքստ
<u>Տուգանային / ազատ հարվածները, 11 մետրանոց հարվածները, կողագծից նետումները, դարպասից հարվածները և անկյունային հարվածները խաղի այլ վերսկսումներ են (տես Կանոն 13-ից 17):</u>

Բացատրություն

Ոչ տրամաբանական էր (հատկապես ոչ մրցավարների համար), որ խաղի վերսկսումների մասին Կանոնը ներառում էր միայն սկզբնահարվածը և «վիճաբանական գնդակի» նետումը: Այդ պատճառով այս Կանոնում ավելացվել են խաղի այլ վերսկսումները:

08.2 Խախտումներ, երբ գնդակը խաղի մեջ չէ
Ավելացված տեքստ
<u>Եթե խախտումը տեղի է ունենում, երբ գնդակը խաղի մեջ չէ, ապա չի փոխվում խաղի վերսկսման եղանակը:</u>

Բացատրություն

Հստակեցվում է, որ խաղի վերսկսումը չի փոխվում այն իրավիճակներում, երբ գնդակը խաղի մեջ չէ: Օրինակ. խաղացողին բռնելը՝ մինչ անկյունային հարվածի կատարվելը, բռնարարքը՝ տուգանային / ազատ հարված նշանակելուց հետո:

08.3 Սկզբնահարված- գնդակը խաղի մեջ համարվելու համար, հարվածից հետո այն պետք է տեսանելիորեն շարժվի: Գնդակին պետք է հարվածել ոտքով՝ ցանկացած ուղղությամբ:	
Հին տեքստ	**Նոր տեքստ**
Գնդակը խաղի մեջ է, երբ դրան հարվածում են ոտքով և այն շարժվում է առաջ:	Գնդակը խաղի մեջ է, երբ դրան հարվածում են ոտքով և այն <u>տեսանելիորեն</u> շարժվում է:

Բացատրություն

Պարտադիր չէ, որ սկզբնահարվածի ժամանակ գնդակն առաջ շարժվի, հետևաբար հարձակվողին գնդակ ստանալու համար անհրաժեշտ չէ կանգնել մրցակցի կիսադաշտում (որը չի թույլատրվում): Ինչպես այլ Կանոններում՝ հարվածից հետո գնդակը պետք է տեսանելիորեն շարժվի: Դրանով վերջ կդրվի այն հաճախ հանդիպող դեպքերին, երբ խաղացողը միայն դիպչում է գնդակին, իսկ հետո անազնվորեն ձևացնում է, որ հարված չի կատարվել:

08.4 «Վիճաբանական գնդակի» նետման դիրք
Ավելացված տեքստ
<u>Մրցավարը կատարում է «վիճաբանական գնդակի» նետումը այնտեղ, որտեղ գտնվում էր գնդակը խաղը կանգնեցնելիս, բացառությամբ, երբ խաղը կանգնեցվել է դարպասային հրապարակում: Այդ դեպքում մրցավարը «վիճաբանական գնդակ»-ի նետումը պետք է կատարի դարպասային գծին զուգահեռ դարպասային հրապարակի գծի այն կետում, որն ամենամոտն էր գնդակի գտնվելու տեղին խաղը կանգնեցնելիս:</u>

Բացատրություն

Այս հստակ սահմանումը ապահովում է, որ այն հաճախակի Կանոններում չկրկնվի:

08.5 Մրցավարը չի կարող որոշել «վիճաբանական գնդակի» նետմանը մասնակցողներին	
Հին տեքստ	**Նոր տեքստ**
Մրցավարը չի կարող որոշել թե ով իրավունք ունի մասնակցել «վիճաբանական գնդակի» նետմանը:	<u>Ցանկացած թվով խաղացողներ կարող են մասնակցել «վիճաբանական գնդակի» նետմանը (ներառյալ դարպասապահները):</u> Մրցավարը չի կարող որոշել թե ով իրավունք ունի մասնակցել «վիճաբանական գնդակի»

	նետմանը կամ պլանավորի դրա հետագա ընթացքը:

Բացատրություն

Հստակեցվում է, որ մրցավարը չպետք է «պլանավորի» «վիճաբանական գնդակի» նետման հետագա ընթացքը:

08.6 «Վիճաբանական գնդակի» նետումից հետո գնդակն անմիջապես գոլ է խփվում	
Հին տեքստ	**Նոր տեքստ**
Եթե գնդակն անմիջապես (…) գոլ է մտնում (…)	Եթե «վիճաբանական գնդակի» նետումից հետո գնդակը գոլ է մտնում առանց նվազագույնը երկու խաղացողների դիպչելու (…)

Բացատրություն

Փոխարինելով «անմիջապես» բառը «առանց նվազագույնը երկու խաղացողների դիպչելու» արտահայտությունով՝ ձևակերպումը դառնում է ավելի պարզ և համահունչ այլ Կանոնների ձևակերպումներին:

Կանոն 09 – Գնդակը խաղի մեջ է կամ խաղից դուրս	
09.1 Գնդակն անդրադարձվում է խաղի պաշտոնյայից	
Հին տեքստ	**Նոր տեքստ**
Գնդակը խաղի մեջ է մնացած ամբողջ ժամանակ, ներառյալ, երբ. • այն անդրադարձվում է դարպասասյունից, հեծանից կամ անկյունային դրոշակից և մնում է խաղադաշտում, • այն անդրադարձվում է մրցավարից կամ մրցավարի օգնականից, երբ նրանք գտնվում են խաղադաշտում:	Գնդակը խաղի մեջ է մնացած ամբողջ ժամանակ, ներառյալ, երբ. • այն անդրադարձվում է խաղի պաշտոնյայից, դարպասասյունից, հեծանից կամ անկյունային դրոշակից և մնում է խաղադաշտում,

Բացատրություն

Փոփոխությունը հաստատում է, որ գնդակը դեռ խաղի մեջ է, երբ այն անդրադարձվում է խաղադաշտից մի փոքր դուրս գտնվող խաղի պաշտոնայից(ՄՕ, ՄԼՕ)՝ ամբողջությամբ չհատելով եզրագիծը:

Կանոն 10 – Խաղի ելքի որոշումը	
10.1 Վերնագրի փոփոխություն	
Հին վերնագիր	**Նոր վերնագիր**
Դարպասի գրավման մեթոդը	Խաղի ելքի որոշումը

Բացատրություն

11 մետրանոց հարվածաշարը, մրցակցի դաշտում խփված գոլերը և այլն այժմ ներառված են այս Կանոնում:

10.2.1 11 մետրանոց հարվածաշարի համար դարպասի ընտրությունը	
Հին տեքստ	**Նոր տեքստ**
Մրցավարն ընտրում է դարպասը, որին պետք է կատարվեն հարվածները: Տուգանային հրապարակը, որտեղ անցկացվում է 11 մետրանոց հարվածաշարը, կարող է միայն փոխվել, եթե դարպասը կամ խաղային ծածկույթը վնասվել է:	Մրցավարը պետք է կատարի վիճականետում, որպեսզի որոշի այն դարպասը, որին պետք է կատարվեն հարվածները, բացառությամբ, եթե կան այլ նկատառումներ (օրինակ. խաղային մակերևույթի որակը, անվտանգությունը և այլն): Դարպասը կարող է փոխվել միայն անվտանգության նկատառումներով, կամ եթե դարպասը կամ խաղային ծածկույթի որակը դառնում է ոչ պիտանի:

Բացատրություն

Սովորաբար հարվածաշարից առաջ մրցավարների համար դժվարություն է ներկայացնում դարպասի ընտրությունը, քանի որ շատ դեպքերում դաշտի տերերի երկրպագուները գտնվում են մի դարպասի իսկ հյուրերինը՝ մյուս դարպասի ետևում: Հետևաբար ընտրության ամենաարդար եղանակը՝ վիճականետումն է, եթե չկան այլ նկատառումներ (խաղային մակերևույթի որակը, անվտանգությունը և այլն):

10.2.2 Հարվածաշարին մասնակցելու իրավունք ունեցող խաղացողներ (ներառյալ ժամանակավորապես խաղադաշտից դուրս գտնվողները)	
Հին տեքստ	**Նոր տեքստ**
Բացառությամբ վերը նշված դեպքից, հարվածաշարին կարող են մասնակցել միայն այն խաղացողները ովքեր գտնվել են խաղադաշտում խաղավարտին, ներառյալ լրացուցիչ ժամանակը, եթե այն անցկացվել է:	Բացառությամբ այն փոխարինողի, ով վնասվածքի դեպքում կփոխարինի դարպասապահին, հարվածաշարին կարող են մասնակցել միայն այն խաղացողները ովքեր խաղավարտին գտնվել են խաղադաշտում կամ ժամանակավորապես խաղադաշտից դուրս (վնասվածք, հանդերձանքի կարգի բերել և այլն):

Բացատրություն

Հստակեցվում է, որ հարվածաշարին մասնակցելու իրավունք ունի նաև խաղավարտին վնասվածքի պատճառով, հանդերձանքը կարգի բերելու համար կամ օրենքով թույլատրվող այլ պատճառներով խաղադաշտից դուրս գտնվող խաղացողը, ինչպես նաև այն փոխարինողը, ով դարպասապահի հնարավոր վնասվածքի դեպքում կփոխարինի նրան:

10.2.3 Հարվածը կատարողների անունները և հերթականությունը	
Հին տեքստ	**Նոր տեքստ**
Յուրաքանչյուր թիմ պատասխանատու է խաղավարտին խաղադաշտում գտնվող խաղացողներից ընտրություն կատարելու և 11 մետրանոց հարվածաշարին նրանց կատարելիք հարվածների հերթականությունը որոշելու համար:	Յուրաքանչյուր թիմ հարվածաշարին մասնակցելու իրավունք ունեցող խաղացողներից պետք է ընտրի հարվածողներին և որոշի նրանց հերթականությունը: Մրցավարը չի տեղեկացվում հերթականության մասին:

Բացատրություն

Հստակեցվում է, որ հարվածողների անունները և / կամ հերթականությունը չպետք է տրվի մրցավարին (որոշ մրցավարներ սխալմամբ պահանջել են հարվածողների անունները, հերթականությունը և դրա խախտման դեպքում չեն թույլատրել կատարել հարվածը):

10.2.4 Նույն քանակի խաղացողներ	
Հին տեքստ	**Նոր տեքստ**
Եթե խաղավարտից հետո և մինչ հարվածաշարի սկիզբը թիմերից մեկի կազմում մնում է ավելի շատ խաղացող, քան մրցակցի կազմում, ապա նրանց քանակը պետք է պակասեցվի՝ մրցակցի խաղացողների թվին հավասարեցնելու համար: Թիմի ավագը պետք է հայտնի մրցավարին կազմից հարկադրաբար դուրս հանված խաղացողների անուններն ու համարները: Եթե 11 մետրանոց հարվածաշարի ընթացքում խաղացողը վնասվածք է ստանում կամ հեռացվում և թիմում մնում է 1 խաղացող պակաս, ապա մրցավարը չպետք է պակասեցնի մյուս թիմի հարված կատարող խաղացողների քանակը: Յուրաքանչյուր թիմում հավասար քանակի խաղացողներ ունենալը պարտադիր է միայն 11 մետրանոց հարվածաշարի սկզբին:	Եթե խաղավարտից հետո, մինչ հարվածաշարի սկիզբը կամ դրա ընթացքում թիմերից մեկն իր կազմում ունենում է ավելի շատ խաղացող, քան մրցակիցը, ապա այդ թիմը պետք է պակասեցնի իր խաղացողների քանակը ՝ մրցակցի խաղացողների թվին հավասարեցնելու համար և մրցավարին պետք է ներկայացնի կազմից հարկադրաբար դուրս հանված յուրաքանչյուր խաղացողի անունը և համարը:

Բացատրություն

Սա հարվածաշարի ընթացքում վերականգնում է «արդար խաղի» սկզբունքը: Քանի որ թիմը՝ իր կազմում ունենալով մրցակցից ավելի քիչ խաղացողներ, ստանում է առավելություն, այսինքն՝ այդ թիմի «լավագույն» հարվածողը հարվածում է երկրորդ անգամ, իսկ մրցակից թիմից հարվածում է վերջին / ամենավատ հարվածողը:

10.2.5 Դարպասապահ, ով ի վիճակի չէ շարունակել	
Հին տեքստ	**Նոր տեքստ**
Դարպասապահը, որը վնասվածք է ստանում հարվածաշարի ընթացքում և ի վիճակի չէ շարունակել, կարող է փոխարինվել գրանցված փոխարինողով, պայմանով, որ թիմը չի օգտագործել մրցման կանոնակարգով սահմանված առավելագույն փոխարինումների քանակը:	Եթե դարպասապահը հարվածաշարից առաջ կամ դրա ընթացքում ի վիճակի չի լինում շարունակել հարվածաշարը և նրա թիմը դեռ չի օգտագործել մրցման կանոնակարգով սահմանված առավելագույն փոխարինումների քանակը, ապա նա կարող է փոխարինվել գրանցված փոխարինողով կամ այն խաղացողով, ով թիմերի կազմերը հավասարեցնելու պատճառով հարկադրաբար հանվել էր: Հետագայում դարպասապահը չի կարող մասնակցել հարվածաշարին և հարված կատարել:

Բացատրություն

Հստակեցվում է, որ հարվածաշարից առաջ և հարվածաշարի ընթացքում վնասվածք ստացած դարպասապահը կարող է փոխարինվել փոխարինողով (կամ այն խաղացողով, ով թիմերի կազմերը հավասարեցնելու պատճառով հարկադրաբար հանվել էր), բայց հետագայում չի կարող հարված կատարել:

10.2.6 Երբ է 11 մետրանոց հարվածն ավարտվում (տես 14.3)
Ավելացված տեքստ
Հարվածն ավարտվում է, երբ գնդակը դադարում է շարժվել, դուրս է գալիս խաղից կամ մրցավարը Կանոնների որևէ խախտման համար կանգնեցնում է խաղը:

Բացատրություն

Հստակեցվում է, թե մրցավարը երբ կորոշի, որ հարվածն ավարտված է (տես 14.3):

10.2.7 Հարվածողների հերթականությունը
Ավելացված տեքստ
• Յուրաքանչյուր հարված կատարվում է տարբեր խաղացողների կողմից: Բոլոր իրավունք ունեցող խաղացողները պետք է կատարեն մեկական հարված, որից հետո միայն խաղացողը կարող է երկրորդ անգամ հարված կատարել • Վերը նշված սկզբունքով շարունակվում է հետագա հարվածների հերթականությունը, բայց թիմը կարող է փոխել հարվածողների հերթականությունը

Բացատրություն

Հստակեցվում է, որ թիմի բոլոր անդամները պետք է կատարեն հավասար քանակի հարվածներ, որից հետո միայն խաղացողը կկարողանա կրկին հարվածել: Հարվածների նոր «փուլում» հարվածողների հերթականությունը կարող է փոխվել:

10.2.8 Խաղադաշտից դուրս եկած խաղացող
Ավելացված տեքստ
Հարվածաշարի հարվածը չպետք է ձգձգվի, եթե խաղացողը դուրս է եկել խաղադաշտից: Այդ խաղացողի հարվածը «չեղյալ» կհամարվի (գոլ չէ), եթե նա հարվածը կատարելու համար ժամանակին չվերադառնա:

Բացատրություն

Հստակեցվում է, որ մրցավարը չպետք է ձգձգի հարվածաշարի հարվածը, եթե խաղացողը դուրս է եկել խաղադաշտից: Եթե խաղացողը հարվածը կատարելու համար ժամանակին հետ չի վերադառնում, ապա նրա հարվածը չի կատարվում (չեղյալ): Կարևոր է կանխել նմանատիպ անարդար արարքը (մարզիչի հրահանգ, միտումնավոր ձգձգում, պայմանավորված խաղ):

Կանոն 11 – Խաղից դուրս	
11.1 Միջնագծի դերը	
Հին տեքստ	**Նոր տեքստ**
Խաղացողը «Խաղից դուրս» դիրքում չէ, եթե. • սեփական կիսադաշտում է (…):	Խաղացողը «խաղից դուրս» դիրքում է, եթե. • <u>նրա գլխի, մարմնի կամ ոտքի որևէ մաս գտնվում է մրցակցի կիսադաշտում (բացառությամբ միջնագիծը)</u>

Բացատրություն

Հստակեցվում է, որ «խաղից դուրս» - ը որոշելիս միջնագիծը «չեզոք» գիծ է: Այսինքն խաղացողի մարմնի մասը պետք է լինի մրցակցի կիսադաշտում, որպեսզի նա լինի «խաղից դուրս» դիրքում:

11.2. Խաղացոների ձեռքերը
Ավելացված տեքստ
Խաղացողը «խաղից դուրս» դիրքում է, եթե. • նրա գլխի, մարմնի կամ ոտքի որևէ մաս գտնվում է մրցակցի դարպասային գծին ավելի մոտ, քան միաժամանակ և գնդակը, և մրցակցի նախավերջին խաղացողը: Սա չի վերաբերվում բոլոր խաղացողների, ներառյալ դարպասապահների ձեռքերին:

Բացատրություն

Հստակեցվում է, որ «խաղից դուրս» - ը որոշելիս պաշտպանների, հարձակվողների և դարպասապահների ձեռքերը չեն դիտարկվում որպես մարմնի մաս:

11.3 Գնդակ խաղալու պահին դիրքը խախտում չէ	
Հին տեքստ	**Նոր տեքստ**
«Խաղից դուրս» դիրքում գտնվող խաղացողը պատժվում է միայն, եթե իր թիմակիցներից որևէ մեկի գնդակին դիպչելու կամ խաղալու պահին ինքը, մրցավարի կարծիքով, ներգրավվում է ակտիվ խաղին, այն է…	Թիմակցի գնդակին դիպչելու կամ խաղալու պահին «խաղից դուրս» դիրքում գտնվող խաղացողը պատժվում է միայն, եթե նա ներգրավվում է ակտիվ խաղին, այն է…

Բացատրություն

Հստակեցվում է, որ սա գնդակ խաղալու պահին խաղացողի «խաղից դուրս» դիրքում գտնվելն է: Խախտումը կատարվում է, երբ տվյալ խաղացողը գնդակ է խաղում: Օրինակ. «խաղից դուրս» դիրքում գտնվող խաղացողը, որը գոլ է խփում դարպասապահի հետ մղումից հետո, խախտում է կատարում, երբ գնդակ է խաղում:

11.4 Անդրադարձից կամ հետ մղումից հետո կատարված խախտում	
Հին տեքստ	**Նոր տեքստ**
«ստանալ առավելություն գտնվելով այդ դիրքում» - նշանակում է, լինելով խաղից դուրս դիրքում՝ խաղալ գնդակ, • որն անդրադարձվել է դարպասասյուներից, հեծանից կամ մրցակցից • (…) մրցակցի միտումնավոր հետ մղումից հետո	«խաղից դուրս» դիրքում գտնվող խաղացողը ստանում է առավելություն, երբ խաղում է գնդակ կամ պայքարում է մրցակցի հետ, որը. • անդրադարձվել կամ շեղվել է դարպասասյուներից, հեծանից կամ մրցակցից • միտումնավոր հետ է մղվել ցանկացած մրցակցի կողմից

Բացատրություն

Հստակեցվում է, որ «խաղից դուրսը» որոշելիս խախտում է անդրադարձից, շեղումից կամ հետ մղումից հետո «մրցակցի հետ պայքարելը»:

11.5 Ազատ հարվածի դիրք	
Հին տեքստ	**Նոր տեքստ**
էջ 35 «Խաղից դուրս» դիրքի խախտման դեպքում մրցավարը նշանակում է ազատ հարված, որն իրացվում է մրցակցի կողմից այնտեղից, որտեղ կատարվել է խախտումը. **էջ 109** Երբ կատարվել է «խաղից դուրս» դիրքի խախտում, մրցավարը նշանակում է ազատ հարված, որն իրացվում է խախտումը կատարող խաղացողի տեղից, երբ գնդակը վերջին անգամ թիմակցի կողմից փոխանցվել էր իրեն:	Եթե կատարվում է «խաղից դուրս» դիրքի խախտում, ապա մրցավարը <u>խախտման տեղից</u> նշանակում է ազատ հարված, <u>ներառյալ, եթե դա կատարվում է խախտում կատարած խաղացողի սեփական կիսադաշտում:</u>

Բացատրություն

Մինչև հիմա Կանոնը և Մեկնաբանությունը հակասում էին իրար: Բոլոր Կանոններում հիմնական սկզբունքն այն է, որ տուգանային / ազատ հարվածը կատարվում է այնտեղից, որտեղ կատարվել է խախտումը: Այժմ դա վերաբերվում է նաև «խաղից դուրսին»: Ազատ հարվածը կարող է կատարվել այն խաղացողի սեփական կիսադաշտից, որը գտնվելով մրցակցի կիսադաշտում «խաղից դուրս» դիրքում, այնուհետև շարժվել է դեպի սեփական կիսադաշտ և այնտեղ կատարել «խաղից դուրս» դիրքի խախտում:

11.6 Խաղադաշտից դուրս գտնվող պաշտպան	
Հին տեքստ	**Նոր տեքստ**
Ցանկացած պաշտպանվող խաղացող, որն առանց մրցավարի թույլտվության, ցանկացած պատճառով լքել է խաղադաշտը, «խաղից դուրս»-ը որոշելիս, մինչ մոտակա խաղադադարը պետք է համարվի տեղակայված սեփական դարպասային գծի կամ կողագծի վրա: Եթե խաղացողը միտումնավոր է լքել խաղադաշտը, ապա նա մոտակա խաղադադարին պետք է պատժվի դեղին քարտով:	Ցանկացած պաշտպանվող խաղացող, ով առանց մրցավարի թույլտվության, լքում է խաղադաշտը, «խաղից դուրս»-ը որոշելիս, պետք է համարվի տեղակայված սեփական դարպասային գծի կամ կողագծի վրա մինչ մոտակա խաղադադարը <u>կամ մինչ պաշտպանվող թիմը գնդակը դուրս կհանի սեփական տուգանային հրապարակից՝ դեպի միջնագիծ:</u> Եթե խաղացողը միտումնավոր է լքել խաղադաշտը, ապա նա մոտակա խաղադադարին պետք է պատժվի դեղին քարտով:

Բացատրություն

Արդար չէ, որ խաղադաշտից դուրս գտնվող վնասվածք ստացած պաշտպանը «փակի» «խաղից դուրսը» մինչ մոտակա խաղադադարը: Նոր ձևակերպումը սահմանում է «խաղից դուրսը» որոշելիս խաղային դրվագի ավարտը, այսինքն, թե երբվանից այդ պաշտպանը չի համարվում խաղադաշտում:

11.7 Խաղադաշտից դուրս գտնվող հարձակվող	
Հին տեքստ	**Նոր տեքստ**
Որպես այդպիսին խախտում չէ, երբ «խաղից դուրս» դիրքում գտնվող խաղացողը քայլ է կատարում խաղադաշտից դուրս, մրցավարին ցույց տալու համար, որ ինքն ակտիվորեն ներգրավված չէ խաղին: Այնուամենայնիվ, եթե մրցավարը համարում է, որ նա տակտիկական նկատառումներով է դուրս եկել խաղադաշտից և վերադառնալիս ստացել է անարդար առավելություն, ապա նա պետք է զգուշացվի ոչ սպորտային վարքագծի համար: Խաղացողը պետք է խնդրի մրցավարի թույլտվությունը՝ խաղադաշտ վերադառնալու համար:	Խաղին ակտիվ չներգրավվելու համար հարձակվողը կարող է քայլ կատարել կամ մնալ խաղադաշտից դուրս: Եթե նա դարպասային գծից վերադառնում է խաղադաշտ և ներգրավվում խաղին մինչ մոտակա խաղադադարը <u>կամ մինչ պաշտպանվող թիմը գնդակը դուրս կհանի սեփական տուգանային հրապարակից՝ դեպի միջնագիծ, ապա «խաղից դուրսը» որոշելիս նա պետք է համարվի դարպասային գծի վրա կանգնած:</u> Եթե խաղացողը միտումնավոր դուրս է գալիս և առանց մրցավարի թույլտվության վերադառնում խաղադաշտ՝ չպատժվելով «խաղից դուրս» դիրքում գտնվելու համար, բայց ստանալով առավելություն, ապա նա պետք է զգուշացվի:

Բացատրություն

Հստակեցվում է, թե ինչպես է պետք վարվել այն հարձակվողի հետ, ով դուրս է գալիս կամ մնում է խաղադաշտից դուրս և հետո վերադառնում:

11.8 Դարպասում գտնվող հարձակվող	
Հին տեքստ	**Նոր տեքստ**
Եթե գնդակը դարպաս մտնելիս, հարձակվողը անշարժ մնացել է դարպասասյուներով և դարպասացանցով սահմանափակված տարածքում, ապա գոլը պետք է արձանագրվի: Այնուամենայնիվ, եթե հարձակվողը շեղում է մրցակցին, գոլը պետք է չարձանագրվի, խաղացողը զգուշացվի՝ ոչ սպորտային վարքագծի համար, և խաղը վերսկսվի «վիճաբանական գնդակ»-ի նետումով (…):	Եթե գնդակը դարպաս մտնելիս, հարձակվողը անշարժ մնացել է դարպասասյուներով և դարպասացանցով սահմանափակված տարածքում, ապա գոլը պետք է արձանագրվի, <u>բացառությամբ այն դեպքերի, երբ խաղացողը կատարել է «խաղից դուրս» դիրքի կամ Կանոն 12-ի խախտում, որի դեպքում</u> խաղը վերսկսվում է ազատ կամ տուգանային հարվածով:

Բացատրություն

Սա համահունչ է «խաղից դուրսի» նոր ձևակերպմանը (հանվել է «մրցակցին շեղել» արտահայտությունը) և հնարավորություն է տալիս խաղադաշտից դուրս կատարված խախտումը պատժել տուգանային / ազատ հարվածով, երբ գնդակը խաղի մեջ է:

Կանոն 12 – Կանոնների խախտումներ և ոչ պատշաճ վարքագիծ
12.1 Խախտումներ, երբ գնդակը խաղի մեջ չէ
Ավելացված տեքստ
<u>Կանոնների խախտումների և ոչ պատշաճ վարքագծի դրսևորման համար տուգանային / ազատ և 11մ հարվածներ կարող են նշանակվել միայն, երբ գնդակը խաղի մեջ է:</u>

Բացատրություն

Եզրափակիչ միտքն այն է (մեկնաբանություններ բաժնից), որ գնդակը պետք է լինի խաղի մեջ, որպեսզի ոչ պատշաճ վարքագծի դրսևորումը պատժվի տուգանային / ազատ կամ 11մ հարվածով:

12.2 Տուգանային հարված - ավելացվում է «պայքար» բառը	
Հին տեքստ	**Նոր տեքստ**
Մրցակից թիմը ստանում է տուգանային հարվածի իրավունք, եթե մրցավարի գնահատմամբ խաղացողը անզգուշորեն (careless), անգիտակցորեն (reckless) կամ օգտագործելով չափազանց մեծ ուժ (using excessive force) կատարում է հետևյալ յոթ խախտումներից որևէ մեկը. • սահանկումով հարձակվում է մրցակցի վրա	Տուգանային հարված նշանակվում է, եթե մրցավարի գնահատմամբ խաղացողը անզգուշորեն (careless), անգիտակցորեն (reckless) կամ օգտագործելով չափազանց մեծ ուժ (using excessive force) կատարում է հետևյալ խախտումներից որևէ մեկը. • մրցակցի հանդեպ կատարում է սահանկում <u>կամ պայքարում է նրա հետ</u>

Բացատրություն

«Մրցակցի հանդեպ կատարում է սահանկում» ենթադրվում է ոտքով պայքար, բայց որոշ դեպքերում պայքարը կարող է կատարվել մարմնի այլ մասերով (օրինակ ծնկով), որը ձևակերպմանը չէր համապատասխանում:

12.3 Հպման դեպքում նշանակվում է տուգանային հարված
Ավելացված տեքստ
<u>Եթե խախտման ժամանակ եղել է հպում, ապա այն պետք է պատժվի տուգանային կամ 11 մետրանոց հարվածով:</u>

Բացատրություն

Հստակեցվում է, որ եթե խախտման ժամանակ հպում է լինում, ապա պետք է նշանակվի տուգանային հարված:

12.4 «Անգիտակցաբար» (reckless) – սահմանումից հանվում է «ընդհանրապես» բառը	
Հին տեքստ	**Նոր տեքստ**
«Անգիտակցաբար» (reckless) - նշանակում է, որ խաղացողը գործել է, ընդհանրապես չգիտակցելով մրցակցին սպառնացող վտանգը և դրա հետևանքը (…)(…) պետք է զգուշացվի:	«Անգիտակցաբար» (reckless) - նշանակում է, որ խաղացողը գործում է, անտեսելով մրցակցին սպառնացող վտանգը և դրա հետևանքը, որի համար նա պետք է զգուշացվի:

Բացատրություն

«Ընդհանրապես» բառը չէր համապատասխանում սահմանմանը:

12.5 Կանոնների լուրջ խախտում – սահմանումից հանվում է «չափից շատ» արտահայտությունը	
Հին տեքստ	**Նոր տեքստ**
«Օգտագործելով չափազանց մեծ ուժ» (Using excessive force) - նշանակում է, որ խաղացողը չափից շատ է գերազանցել անհրաժեշտ ուժի օգտագործումը և մրցակցին վնասվածք հասցնելու վտանգ է առաջացրել (…)(…) պետք է հեռացվի:	«Օգտագործելով չափազանց մեծ ուժ» (Using excessive force) - նշանակում է, որ խաղացողը գերազանցում է անհրաժեշտ ուժի օգտագործումը և մրցակցին վնասվածք հասցնելու վտանգ է առաջացնում, որի համար նա պետք է հեռացվի:

Բացատրություն

«Չափից շատ» արտահայտությունը չէր համապատասխանում սահմանմանը:

12.6 Տուգանային հարված - ավելացվել է «հպումով խոչընդոտում է մրցակցին»
Ավելացված տեքստ
Տուգանային հարված նշանակվում է, երբ խաղացողը կատարում է հետևյալ խախտումներից որևէ մեկը. • հպումով խոչընդոտում է մրցակցին

Բացատրություն

Հստակեցվում է, որ մրցակցին հպումով խոչընդոտելու դեպքում նշանակվում է տուգանային հարված:

12.7 Առանց հպման խոչընդոտելը՝ դա ազատ հարված է	
Հին տեքստ	**Նոր տեքստ**
Մրցակից թիմը ստանում է ազատ հարվածի իրավունք նաև, եթե, (…)(…) խաղացողը խոչընդոտում է մրցակցի առաջընթացին:	Նշանակվում է ազատ հարված, եթե, (…) խաղացողը <u>առանց որևէ հպման</u> խոչընդոտում է մրցակցի առաջընթացը:

Բացատրություն

Հստակեցվում է, որ առանց հպման մրցակցին խոչընդոտելու դեպքում նշանակվում է ազատ հարված:

12.8 Կարգապահական պատժամիջոց կիրառելու իրավունքը՝ սկսած խաղադաշտի մինչխաղային ստուգումից (տես 5.4)	
Հին տեքստ	**Նոր տեքստ**
Մրցավարն իրավասու է կարգապահական պատժամիջոցներ կիրառել այն պահից սկսած, երբ մտնում է խաղադաշտ, մինչ եզրափակիչ սուլիչից հետո այն լքելը:	Մրցավարն իրավասու է կարգապահական պատժամիջոցներ կիրառել <u>մինչխաղային ստուգման համար</u> խաղադաշտ մտնելու պահից սկսած, <u>մինչ եզրափակիչ սուլիչից հետո այն թողնելը (ներառյալ 11 մետրանոց հարվածաշարը):</u> <u>Եթե խաղացողը, մինչ խաղի սկիզբը խաղադաշտ մտնելը, կատարում է հեռացման արժանի խախտում, ապա մրցավարն իրավասու է թույլ չտալ նրան մասնակցելու խաղին (տես 3.6): Մրցավարը պետք է զեկուցագիր ներկայացնի ցանկացած ոչ պատշաճ վարքագծի դրսևորման դեպքում:</u>

Բացատրություն

Սա նույն Կանոն 5-ի փոփոխությունն է (տես 5.4):

12.9 Կարմիր քարտով պատժվող խախտումից հետո կիրառված առավելություն տալու սկզբունք, որից հետո մեղավոր խաղացողը ներգրավվում է խաղին
Ավելացված տեքստ
Կանոնների լուրջ խախտման, բռնարարքի կամ երկրորդ զգուշացման արժանի խախտման դեպքում չպետք է կիրառվի առավելություն տալու սկզբունքը, բացառությամբ, եթե կա գոլ խփելու ակնհայտ հնարավորություն: Մրցավարը պետք է հեռացնի խաղացողին մոտակա խաղադադարին, բայց եթե մինչ այդ խաղացողը խաղա գնդակ կամ պայքարի / խանգարի մրցակցին, ապա մրցավարը պետք է կանգնեցնի խաղը, հեռացնի խաղացողին և այն վերսկսի ազատ հարվածով:

Բացատրություն

Հստակեցվում է, որ այն բացառիկ դեպքում, երբ մրցավարը կարմիր քարտի արժանի խախտումից հետո կիրառում է առավելություն տալու սկզբունքը (միայն եթե ակնհայտ է գոլ խփելու հնարավորությունը), սակայն հետագայում խախտում կատարած խաղացողը ներգրավվում է խաղին, ապա մրցավարը պետք է կանգնեցնի խաղը: Քանի որ, եթե այդ խաղացողը գոլ խփի, նպաստի գոլին կամ կանխի մրցակցի գոլը, ապա դա կհակասի «արդար խաղի» սկզբունքներին:

12.10 Զգուշացումներ ձեռքով խաղի համար	
Հին տեքստ	**Նոր տեքստ**
Կան տարբեր հանգամանքներ, երբ խաղացողը պետք է զգուշացվի ոչ սպորտային վարքագծի համար, օրինակ, եթե խաղացողը. • տակտիկական նկատառումներով խախտում է կատարում՝ խանգարելով զարգացնել կամ խափանելով մրցակցի հեռանկարային գրոհը • տակտիկական նկատառումներով բռնում/պահում է մրցակցին՝ քաշել հեռացնելով նրան գնդակից կամ խոչընդոտելով հասնել գնդակին, • ձեռքով գնդակ խաղալով՝ զրկում է մրցակցին այն տիրելու հնարավորությունից կամ խափանում է մրցակցի գրոհը • ձեռքով գնդակ խաղալով՝ փորձում է գոլ խփել (անկախ նրանից, փորձը հաջո՞ղ է, թե՞ ոչ)	Կան տարբեր հանգամանքներ, երբ խաղացողը պետք է զգուշացվի ոչ սպորտային վարքագիծ դրսևորելու համար, օրինակ, եթե խաղացողը. • կատարում է խախտում կամ <u>ձեռքով գնդակ է խաղում՝</u> խանգարելով զարգացնել կամ խափանելով մրցակցի հեռանկարային գրոհը • ձեռքով գնդակ է խաղում՝ փորձելով գոլ խփել (անկախ նրանից, փորձը հաջո՞ղ է, թե՞ ոչ) <u>կամ գոլը կանխելու անհաջող փորձ կատարելով</u>

Բացատրություն

- Դեղին քարտով պատժվող խախտումներից հանվել է այն դեպքը, երբ «խաղացողը ձեռքով գնդակ խաղալով՝ զրկում է մրցակցին գնդակին տիրելու հնարավորությունից», քանի որ որոշ մրցավարներ ցանկացած ձեռքով խաղի համար դեղին քարտ էին ցույց տալիս:
- Ձեռքով խաղը ներառվել է որպես դեղին քարտով պատժվող խախտում, եթե «խաղացողը ձեռքով գնդակ խաղալով՝ խանգարում է զարգացնել կամ խափանում է մրցակցի հեռանկարային գրոհը» (դա նմանեցվել է այն դեպքերին, երբ խաղացողը այլ խախտման միջոցով խանգարում է զարգացնել կամ խափանում է մրցակցի հեռանկարային գրոհը):
- Հստակեցվում է, որ խաղացողը, ով ձեռքով խաղալով անհաջող փորձ է կատարում կանխել մրցակցի գոլը, պետք է դեղին քարտ ստանա:

12.11 Տուգանային հրապարակում մրցակցին ակնհայտ գոլային հնարավորությունից զրկելը
Ավելացված տեքստ
Եթե խաղացողը ձեռքով գնդակ խաղալով մրցակցին զրկում է գոլից կամ ակնհայտ գոլային հնարավորությունից, ապա նա պետք է հեռացվի խաղադաշտից՝ անկախ այն բանից թե որտեղ է կատարվել խախտումը: Եթե խաղացողը սեփական տուգանային հրապարակում մրցակցի նկատմամբ խախտում է կատարում, որով զրկում է նրան ակնհայտ գոլային հնարավորությունից և մրցավարը նշանակում է 11 մետրանոց հարված, ապա խախտում կատարած խաղացողը պետք է զգուշացվի, բացառությամբ. • եթե նա խախտումը կատարել է մրցակցին բռնելով / պահելով , քաշելով կամ հրելով, կամ • եթե խախտում կատարած խաղացողը չի փորձել խաղալ գնդակ կամ չի ունեցել հնարավորություն պայքարել գնդակ խաղալու համար, կամ • եթե նա կատարել է այնպիսի խախտում, որը միշտ պատժվում է կարմիր քարտով՝ անկախ նրանից թե խաղադաշտի որ մասում է կատարվում (օրինակ. կանոնների լուրջ խախտում, բռնարարք և այլն) Վերը նշված բոլոր դեպքերում խաղացողը պետք է հեռացվի:

Բացատրություն

Երբ տուգանային հրապարակում պաշտպանը կատարում է խախտում, որով զրկում է մրցակցին ակնհայտ գոլային հնարավորությունից, ապա նշանակելով 11 մետրանոց հարված թիմին լիարժեքորեն փոխհատուցվում է գոլային հնարավորությունը, հետևաբար խախտում կատարած խաղացողի պատիժը պետք է ավելի մեղմ լինի (դեղին քարտ), քան այն դեպքերում, երբ խախտումը կատարվել է տուգանային հրապարակից դուրս: Այնուամենայնիվ խաղացողը պետք է հեռացվի, եթե նա խախտել է կանոնները խաղալով ձեռքով կամ եթե ակնհայտորեն չի փորձել խաղալ գնդակ կամ պայքարել գնդակ խաղալու համար (վերը նկարագրված դեպքեր):

12.12 Կանոնների լուրջ խախտում - ավելացվում է «պայքար» բառը	
Հին տեքստ	**Նոր տեքստ**
Սահանկումը, որը սպառնում է մրցակցի անվտանգությանը, պետք է որակվի որպես «կանոնների լուրջ խախտում» և պատժվի:	Սահանկումը կամ պայքարը, որը սպառնում է մրցակցի առողջությանը, պետք է որակվի որպես «կանոնների լուրջ խախտում» և պատժվի:

Բացատրություն

Սա նույն 12.2 կետի փոփոխությունն է: «Պայքարը», որը սպառնում է մրցակցի առողջությանը, իր մեջ ներառում է ձեռքերով, արմունկով և մարմնի այլ մասերով կատարված խախտումները:

12.13 Բռնարարք - երբ հպում չկա	
Հին տեքստ	**Նոր տեքստ**
Խաղացողը մեղավոր է ճանաչվում բռնարարք կատարելու մեջ, եթե գնդակի համար չպայքարելով, մրցակցի դեմ օգտագործում է չափազանց մեծ ուժ կամ դաժանություն կամ դա կատարում է թիմակցի, հանդիսատեսի, խաղի պաշտոնյայի կամ այլ անձի նկատմամբ:	Բռնարարքը դա այն է, երբ խաղացողը գնդակի համար չպայքարելով, մրցակցի դեմ օգտագործում կամ փորձում է օգտագործել չափազանց մեծ ուժ կամ դաժանություն: Բռնարարք է նաև եթե խաղացողը նույնը կատարում է թիմակցի, թիմի պաշտոնյայի, խաղի պաշտոնյայի, հանդիսատեսի կամ այլ անձի նկատմամբ: Վերը նկարագրվածը պետք է որակվի որպես բռնարարք նույնիսկ, եթե հպում չի եղել:

Բացատրություն

Հստակեցվում է, որ բռնության փորձը նույնպես պատժվում է կարմիր քարտով (չի եղել հպում):

12.14 Բռնարարք -գլխի/դեմքի հետ հպում
Ավելացված տեքստ
Խաղացողը պատժվում է բռնարարք կատարելու համար նաև, եթե գնդակի համար չպայքարելով միտումնավոր ձեռքով հարվածում է մրցակցի կամ մեկ այլ անձի գլխին կամ դեմքին, բացառությամբ եթե օգտագործված ուժը չնչին է:

Բացատրություն

Հստակեցվում է, որ խաղացողը, ով միտումնավոր ձեռքով հարվածում է մրցակցի գլխին կամ դեմքին (երբ չի պայքարում գնդակի համար) պետք է հեռացվի (բացառությամբ եթե օգտագործված ուժը չնչին է):

12.15 Փոխարինողների, թիմի պաշտոնյաների, խաղի պաշտոնյաների և այլ անձանց նկատմամբ կատարված խախտումներ	
Հին տեքստ	**Նոր տեքստ**
Եթե գնդակը խաղի մեջ է և խաղացողը խախտում է կատարում խաղադաշտում. • մրցակցի նկատմամբ, խաղը վերսկսվում է տուգանային հարվածով այնտեղից, որտեղ կատարվել է խախտումը (տե՛ս Կանոն 13-Տուգանային/ազատ հարվածների դիրք) կամ 11 մետրանոց հարվածով (եթե խախտումը կատարվել է պաշտպանվողի կողմից իր տուգանային հրապարակում), • թիմակցի նկատմամբ, խաղը վերսկսվում է ազատ հարվածով այնտեղից, որտեղ կատարվել է խախտումը (տես Կանոն 13-Տուգանային/ազատ հարվածների դիրք), • փոխարինող կամ փոխարինված խաղացողի նկատմամբ, խաղը	Եթե գնդակը խաղի մեջ է և խաղացողը խախտում է կատարում խաղադաշտում. • մրցակցի նկատմամբ, ապա խաղը վերսկսվում է տուգանային / ազատ կամ 11 մետրանոց հարվածով • թիմակցի, փոխարինողի, փոխարինված խաղացողի, թիմի պաշտոնյայի կամ խաղի պաշտոնյայի նկատմամբ, ապա խաղը վերսկսվում է տուգանային կամ 11 մետրանոց հարվածով • ցանկացած այլ անձի նկատմամբ, ապա խաղը վերսկսվում է «վիճաբանական գնդակի» նետումով

վերսկսվում է ազատ հարվածով այնտեղից, որտեղ գնդակն էր խաղը կանգնեցնելիս (տե՛ս Կանոն 13-Տուգանային/ազատ հարվածների դիրք), • մրցավարի կամ մրցավարի օգնականի նկատմամբ, խաղը վերսկսվում է ազատ հարվածով այնտեղից, որտեղ կատարվել է խախտումը (տե՛ս Կանոն 13-Տուգանային/ազատ հարվածների դիրք) • այլ անձի նկատմամբ, խաղը վերսկսվում է «վիճաբանական գնդակի»-ի նետումով այնտեղից, որտեղ գտնվում էր գնդակը խաղը կանգնեցնելու պահին, բացառությամբ, եթե խաղը կանգնեցվել է դարպասային հրապարակում, որի դեպքում մրցավարը կատարում է «վիճաբանական գնդակ»-ի նետում դարպասային գծին զուգահեռ, դարպասային հրապարակի գծի այն կետում, որն ամենամոտն է գնդակի գտնվելու տեղին՝ խաղը կանգնեցնելիս:	

Բացատրություն

Խստանում է այլ մասնակցի նկատմամբ կատարված խախտման համար պատժի չափը, որպեսզի ընդգծվի այսպիսի գործողությունների դեմ պայքարը: Օրինակ, խաղի պաշտոնյայի նկատմամբ կատարված խախտման համար ազատ հարված նշանակելը մեղմ պատիժ է:

12.16 Խաղադաշտից դուրս կատարված խախտումներ (տես 13.3 + 14.1)	
Հին տեքստ	**Նոր տեքստ**
Եթե գնդակը խաղի մեջ է և խախտումը կատարվել է խաղադաշտից դուրս… • եթե խաղացողը թողնում է խաղադաշտը խախտում կատարելու համար, խաղը վերսկսվում է ազատ հարվածով այնտեղից, որտեղ գնդակն էր խաղը կանգնեցնելիս (տե՛ս Կանոն 13- Տուգանային/ազատ հարվածների դիրք):	Եթե գնդակը խաղի մեջ է և խախտումը կատարվել է խաղադաշտից դուրս (…) Այնուամենայնիվ, եթե խաղացողը դուրս է գալիս խաղադաշտից որպես խաղի մաս և մեկ այլ խաղացողի նկատմամբ խախտում է կատարում, ապա խաղը պետք է վերսկսվի տուգանային / ազատ հարվածով՝ եզրագծի այն կետից, որն ամենամոտն է խախտման տեղին և եթե այդ կետը խախտում կատարողի տուգանային հրապարակում է, իսկ խախտումը պետք է պատժվեր տուգանային հարվածով, ապա պետք է նշանակվի 11 մետրանոց հարված:

Բացատրություն

Սա սպասված և ընդունելի փոփոխություն է: Եթե երկու խաղացողներ դուրս են եկել խաղադաշտից որպես խաղի մաս և նրանցից մեկը խաղադաշտից դուրս մյուսի նկատմամբ խախտում է կատարել, ապա պետք է նշանակվի տուգանային / ազատ հարված: Քանի որ ոչ տրամաբանական էր, երբ մրցավարը ցույց էր տալիս դեղին / կարմիր քարտ, իսկ հետո խաղը վերսկսում «վիճաբանական գնդակի» նետումով կամ ազատ հարվածով: Տուգանային / ազատ հարվածը պետք է կատարվի կողագծի / դարպասային գծի այն կետից, որն ամենամոտն է խախտման տեղին: Եթե այդ կետը խախտում կատարողի տուգանային հրապարակի դարպասային գծի վրա է, ապա պետք է նշանակվի 11 մետրանոց հարված:

Կանոն 13 – Տուգանային / ազատ հարվածներ	
13.1 Տուգանային / ազատ հարվածները նշանակվում են մրցակից թիմի օգտին	
Հին տեքստ	**Նոր տեքստ**
Կանոնների խախտման համար նշանակված հարվածները լինում են ազատ կամ տուգանային:	Տուգանային և ազատ հարվածները նշանակվում են խախտում կատարած խաղացողի մրցակից թիմի օգտին:

Բացատրություն

Կանոնի սկզբում նշվում է, որ տուգանային / ազատ հարվածները նշանակվում են մրցակից թիմի օգտին: Սա թույլ է տալիս հետագայում Կանոններում հաճախակի չկրկնել «մրցակից թիմի օգտին» արտահայտությունը:

13.2 Տուգանային / ազատ հարվածների դիրքեր
Ավելացված տեքստ
Բոլոր տուգանային / ազատ հարվածները կատարվում են այնտեղից, որտեղ կատարվել է խախտումը, բացառությամբ.

Բացատրություն

Կանոնի սկզբում նշված հստակ սահմանումը հետագայում թույլ է տալիս Կանոններում հաճախակի չկրկնել «տուգանային / ազատ հարվածների դիրք» մեջբերումը:

13.3 Խաղադաշտից դուրս կատարված խախտումներ	
Հին տեքստ	**Նոր տեքստ**
Այն տուգանային / ազատ հարվածները, որոնք նշանակվում են, երբ խաղացողը առանց մրցավարի թույլտվության մտնում, վերադառնում է խաղադաշտ կամ դուրս է գալիս խաղադաշտից, պետք է կատարվեն այնտեղից, որտեղ գտնվել է գնդակը խաղը կանգնեցնելիս:	Այն տուգանային / ազատ հարվածները, որոնք նշանակվում են, երբ խաղացողը առանց մրցավարի թույլտվության մտնում, վերադառնում է խաղադաշտ կամ դուրս է գալիս խաղադաշտից, պետք է կատարվեն այնտեղից, որտեղ գտնվել է գնդակը խաղը կանգնեցնելիս: Այնուամենայնիվ, եթե խաղացողը դուրս է գալիս խաղադաշտից որպես խաղի մաս և մեկ այլ խաղացողի նկատմամբ խախտում է կատարում, ապա խաղը պետք է վերսկսվի տուգանային / ազատ հարվածով՝ եզրագծի այն կետից, որն ամենամոտն է խախտման տեղին և եթե այդ կետը խախտում կատարողի տուգանային հրապարակում է, իսկ խախտումը պետք է պատժվեր տուգանային հարվածով, ապա պետք է նշանակվի 11 մետրանոց հարված:

Բացատրություն

Սա համահունչ է 12.16 և 14.1 կետերում սահմանված փոփոխություններին:

13.4 Գնդակը խաղի մեջ մտնելու համար պետք է տեսանելիորեն շարժվի	
Հին տեքստ	**Նոր տեքստ**
Գնդակը խաղի մեջ է , երբ դրան հարվածում են ոտքով, և այն շարժվում է:	Գնդակը խաղի մեջ է , երբ ոտքով հարվածից հետո այն տեսանելիորեն շարժվում է…

Բացատրություն

Փոփոխությունը համահունչ է սկզբնահարվածի (8.3), 11 մետրանոց հարվածի (14.2) և անկյունային հարվածի հետ (17.2):

13.5 Տուգանային / ազատ հարվածների կատարմանը խոչընդոտելը / գնդակին տիրելը	
Հին տեքստ	**Նոր տեքստ**
Եթե խաղացողը որոշում է արագ կատարել տուգանային/ազատ հարվածը, իսկ մրցակիցը, որը գնդակի մոտ է, միտումնավոր խանգարում է նրան հարվածը կատարել, մրցավարը պետք է զգուշացնի այդ խաղացողին խաղի վերսկսումը ձգձգելու համար: Եթե խաղացողը որոշում է արագ կատարել տուգանային/ազատ հարվածը, իսկ մրցակիցը, որը 9.15մ (10 յարդ)-ից մոտ է գնդակին, խլում է այն, մրցավարը պետք է թույլատրի խաղը շարունակել:	Եթե խաղացողը արագ կատարում է տուգանային/ազատ հարվածը, իսկ գնդակին տիրում է մրցակիցը, որը դեռ 9.15մ (10 յարդ)-ից մոտ է գնդակին, ապա մրցավարը թույլատրում է շարունակել խաղը: Այնուամենայնիվ, եթե մրցակիցը միտումնավոր թույլ չի տալիս կատարել տուգանային / ազատ հարվածը, ապա նա պետք է զգուշացվի՝ խաղի վերսկսումը ձգձգելու համար:

Բացատրություն

Փոփոխություն միջոցով հստակ տարանջատում է՝ տուգանային / ազատ հարվածի կատարմանը խոչընդոտելը/ թույլ չտալը և տուգանային / ազատ հարվածի արագ կատարումից հետո է գնդակին տիրելը:

Կանոն 14 - 11 մետրանոց հարվածը	
14.1 11 մետրանոց հարված՝ խաղադաշտից դուրս կատարված խախտման համար (տես 12.16 + 13.3)	
Հին տեքստ	**Նոր տեքստ**
11 մետրանոց հարված է նշանակվում այն թիմի դարպասին, որի խաղացողները սեփական տուգանային հրապարակում կատարում են այն տասը խախտումներից որևէ մեկը, որի համար նշանակվում է տուգանային հարված, երբ գնդակը խաղի մեջ է:	11 մետրանոց հարված նշանակվում է, եթե խաղացողը կատարում է տուգանային հարվածով պատժվող խախտում իրենց տուգանային հրապարակում կամ <u>որպես խաղի մաս՝</u> <u>խաղադաշտից դուրս, ինչպես նշված է</u> Կանոն12-ում և 13-ում

Բացատրություն

Կրկնվում է Կանոն12-ի և 13-ի փոփոխությունները: Այսինքն, եթե պաշտպանը խաղադաշտից դուրս խախտում է կատարում՝մինչ գնդակը խաղի մեջ է և խախտման տեղին ամենամոտ կետը խախտում կատարողի տուգանային հրապարակում է, ապա նշանակվում է 11 մետրանոց հարված:

14.2 Գնդակի անշարժ դիրքը և շարժումը	
Հին տեքստ	**Նոր տեքստ**
Գնդակը. • պետք է գտնվի 11 մետրանոց նշակետի վրա • գնդակը խաղի մեջ է, երբ դրան հարվածում են ոտքով և այն շարժվում է առաջ	Գնդակը • պետք է անշարժ տեղադրված լինի 11 մետրանոց նշակետի վրա • Գնդակը խաղի մեջ է, երբ ոտքով հարվածից հետո այն <u>տեսանելիորեն շարժվում է</u>

Բացատրություն

Այս փոփոխությունը համահունչ է մնացած փոփոխությունների հետ:

14.3 Երբ է 11 մետրանոց հարվածն ավարտված (տես 10.2.6)
Ավելացված տեքստ
11 մետրանոց հարվածն ավարտված է, երբ գնդակը դադարում է շարժվել, դուրս է գալիս խաղից կամ մրցավարը կանոնների որևէ խախտման համար կանգնեցնում է խաղը:

Բացատրություն

Հստակեցվում է, թե երբ է 11 մետրանոց հարվածն համարվում ավարտված:

14.4 Որոշ խախտումներ միշտ պատժվում են ազատ հարվածով	
Հին տեքստ	**Նոր տեքստ**
Եթե մրցավարը 11 մետրանոց հարվածը կատարելու ազդանշան է տալիս, և մինչ գնդակի՝ խաղի մեջ մտնելը ստեղծվում է հետևյալ իրադրություններից որևէ մեկը. Հարվածն իրացնող խաղացողը խախտում է «Խաղի կանոններ»-ը. • մրցավարը թույլ է տալիս հարվածը կատարել, • եթե գնդակը գոլ է մտնում, հարվածը կրկնվում է, • եթե գնդակը գոլ չի մտնում, մրցավարը ընդհատում է խաղը և այն վերսկսում մրցակցի օգտին ազատ հարվածով այն տեղից, որտեղ կատարվել է խախտումը: Դարպասապահը խախտում է «Խաղի կանոններ»-ը. • մրցավարը թույլ է տալիս հարվածը կատարել, • եթե գնդակը գոլ է մտնում՝ գոլը արձանագրվում է, • եթե գնդակը գոլ չի մտնում, հարվածը կրկնվում է: Հարվածն իրացնողի թիմակիցը խախտում է	Երբ մրցավարը 11 մետրանոց հարվածը կատարելու ազդանշան է տալիս, ապա այն պետք է կատարվի: Եթե մինչ գնդակը կմտնի խաղի մեջ կատարվում է հետևյալ դեպքերից որևէ մեկը. 11 մետրանոց հարվածը կատարող խաղացողը կամ նրա թիմակիցը Խաղի Կանոնների խախտում է կատարում. • եթե գնդակը գոլ է մտնում, ապա հարվածը կրկնվում է • եթե գնդակը գոլ չի մտնում, ապա մրցավարը կանգնեցնում է խաղը և այն վերսկսում՝ ազատ հարվածով բացառությամբ այն դեպքերի, երբ կատարվում են հետևյալ խախտումները, որոնց դեպքում անկախ այն բանից գոլ է խփվում թե ոչ՝ խաղը պետք է կանգնեցվի և վերսկսվի ազատ հարվածով • երբ հարվածը կատարում է 11 մետրանոց հարվածը կատարելու համար առանձնացված խաղացողի թիմակիցը: Այս դեպքում մրցավարը պետք է նաև

«Խաղի կանոններ»-ը. • մրցավարը թույլ է տալիս հարվածը կատարել, • եթե գնդակը գոլ է մտնում, հարվածը կրկնվում է, • եթե գնդակը գոլ չի մտնում, մրցավարը ընդհատում է խաղը և այն վերսկսում մրցակցի օգտին ազատ հարվածով այն տեղից, որտեղ կատարվել է խախտումը: Դարպասապահի թիմակիցը խախտում է «Խաղի կանոններ»-ը. • մրցավարը թույլ է տալիս հարվածը կատարել, • եթե գնդակը գոլ է մտնում՝ գոլը արձանագրվում է, • եթե գնդակը գոլ չի մտնում, հարվածը կրկնվում է:	<u>զգուշացնի հարվածը կատարողին</u> • <u>երբ 11 մետրանոց հարվածը դեպի հետ է կատարվում</u> • <u>երբ 11 մետրանոց հարված կատարողը թափավագքը ավարտելուց հետո խաբք է կիրառում և հարվածում գնդակին (թույլատրվում է թափավագքի ընթացքում խաբք կիրառել): Այս դեպքում մրցավարը պետք է նաև զգուշացնի հարվածը կատարողին</u>

Բացատրություն

Ընդգծվում է, որ 11 մետրանոց հարվածի ընթացքում սովորաբար կատարվող խախտումներին հաջորդող՝ հարվածը կրկնելու / գոլի / ազատ հարվածի որոշումները չեն վերաբերվում վերը նկարագրված դեպքերին, հատկապես, երբ հարվածը կատարում է սխալ խաղացող կամ «անօրինական» խաբք է կիրառվում: Այս դեպքերը հանդիսանում են «միտումնավոր» ոչ սպորտային վարքագծի դրսևորումներ:

14.5 Դարպասապահի կողմից կատարված խախտումներ
Ավելացված տեքստ
Եթե գնդակը գոլ չի մտնում, ապա հարվածը կրկնվում է: <u>Եթե խախտումը կատարել է դարպասապահը, ապա նա պետք է զգուշացվի:</u>

Բացատրություն

Քանի որ Կանոնը փոփոխությունը ավելի խիստ պատիժ է նախատեսում «անօրինական խաբք կիրառող» խաղացողի նկատմամբ, ապա արդարացի է պատիժը խստացնել նաև Կանոնը խախտող դարպասապահի նկատմամբ: Այսինքն, եթե դարպասապահի խախտման պատճառով հարվածը կրկնվում է, ապա նա պետք է զգուշացվի: Սա կնպաստի նրան, որ դարպասապահները չխախտեն այս Կանոնը:

14.6 Միաժամանակ կատարված մի քանի խախտումներ	
Հին տեքստ	**Նոր տեքստ**
Եվ պաշտպանվող, և՛ հարձակվող թիմի խաղացողները խախտում են «Խաղի Կանոնները», ապա հարվածը կրկնվում է:	Եթե և պաշտպանվող, և՛ հարձակվող թիմի խաղացողները խախտում են «Խաղի Կանոնները», ապա հարվածը պետք է կրկնվի, <u>բացառությամբ, երբ խաղացողը կատարել է ավելի լուրջ խախտում (օրինակ անօրինական խաբբ):</u>

Բացատրություն

Կրկնվում է Կանոն 5 – ի փոփոխությունը, երբ ավելի լուրջ խախտումն է պատժվում (տես 5.3):

Կանոն 15 – Կողագծից նետումը
15.1 Գնդակը նետվում է երկու ձեռքերով
Նոր տեքստ
Գնդակը նետելու պահին նետողը պետք է. • դեմքով լինի դեպի խաղադաշտը • յուրաքանչյուր ոտնաթաթի մի մասով կանգնած լինի կամ կողագծի կամ գետնի վրա՝ կողագծից դուրս • <u>երկու ձեռքով նետի</u> գնդակը ՝ գլխի հետևից - գլխի վրայով, այնտեղից, որտեղ գնդակը դուրս էր եկել խաղադաշտից

Բացատրություն

- Նախկին կանոնի 3 և 4 կետերը միացվել են իրար և ընդգծվել է, որ չի թույլատրվում «մեկ ձեռքով» խախտումով նետումը (երբ նետումը իրականում կատարվում է մեկ ձեռքով, իսկ մյուսը ուղղակի ձևական ուղեկցում է):

15.2 Խախտումներ՝ սահմանված 2 մ (2 յարդ) տարածությունում	
Հին տեքստ	**Նոր տեքստ**
Եթե մրցակիցն անազնիվ կերպով ապակողմնորոշում կամ խանգարում է նետողին. • ապա նա պետք է զգուշացվի ոչ սպորտային վարքագիծ դրսևորելու համար	Մրցակիցը, ով անազնիվ կերպով ապակողմնորոշում կամ խանգարում է նետողին (ներառյալ, երբ 2 մ – ից (2 յարդ) ավելի է մոտենում նետման տեղին) պետք է զգուշացվի ոչ սպորտային վարքագիծ դրսևորելու համար: Եթե կողագծից նետումն արդեն կատարվել էր, ապա պետք է նշանակվի ազատ հարված:

Բացատրություն

Հստակեցվում է, որ սահմանված 2 մ (2 յարդ) հեռավորության չպահպանելը դիտվում է որպես նետողին անազնիվ կերպով ապակողմնորոշել կամ խանգարել: Եթե կողագծից նետումն արդեն կատարվել էր, ապա պետք է նշանակվի ազատ հարված:

Կանոն 16 – Հարված դարպասից
16.1 Նշանակվում է անկյունային հարված, եթե անմիջապես դարպասից հարվածով գնդակը մտնում է սեփական դարպասը
Ավելացված տեքստ
• Դարպասից հարվածով ուղղակիորեն կարելի է գոլ խփել, բայց միայն մրցակցի դարպասը: Եթե դարպասից հարվածով գնդակը դուրս գալով տուգանային հրապարակից՝ անմիջապես մտնում է հարվածողի դարպասը , ապա մրցակցի օգտին պետք է նշանակվի անկյունային հարված:

Բացատրություն

Հստակեցվում է խաղի վերսկսումը այն դեպքում, երբ խաղացողը անմիջապես դարպասից հարվածով գրավում է սեփական դարպասը (օրինակ ուժեղ քամու դեպքում):

16.2 Գնդակը պետք է անշարժ լինի
Նոր տեքստ
• գնդակը պետք է անշարժ տեղադրված լինի և ոտքով հարվածը պետք է կատարվի դարպասային հրապարակի ցանկացած կետից՝ պաշտպանվող թիմի խաղացողի կողմից

Բացատրություն

Հստակեցվում է, որ գնդակը պետք է անշարժ լինի, քանի որ դա սահմանված չէր հին տեքստում:

16.3 Տուգանային հրապարակում գտնվող հարձակվող
Ավելացված տեքստ
• Եթե մրցակիցը, ով դարպասից հարվածը կատարելու պահին գտնվում էր տուգանային հրապարակում, դիպչում է գնդակին կամ պայքարում է գնդակի համար՝ մինչ մեկ այլ խաղացող կդիպչեր դրան, ապա դարպասից հարվածը պետք է կրկնվի:

Բացատրություն

Հստակեցվում է, որ դարպասից հարվածը կատարելու պահին տուգանային հրապարակում գտնվող ցանկացած մրցակից (ներ), չի կարող դիպչել / պայքարել գնդակի համար, քանի դեռ մեկ այլ խաղացող չի դիպել դրան: Այսպիսով Կանոնին հակառակ տուգանային հրապարակում գտնվող մրցակիցը չպետք է առավելություն ստանա իր դիրքից:

Կանոն 17 – Անկյունային հարվածը
17.1 Նշանակվում է անկյունային հարված, եթե անմիջապես անկյունային հարվածով գնդակը մտնում է սեփական դարպասը
Ավելացված տեքստ
• Անկյունային հարվածով ուղղակիորեն կարելի է գոլ խփել, բայց միայն մրցակցի դարպասը: Եթե անկյունային հարվածով գնդակն անմիջապես մտնում է հարվածողի դարպասը , ապա մրցակցի օգտին պետք է նշանակվի անկյունային հարված:

Բացատրություն

Հստակեցվում է խաղի վերսկսումը այն դեպքում, երբ խաղացողը անմիջապես անկյունային հարվածով գրավում է սեփական դարպասը:

16.2 Գնդակը պետք է անշարժ լինի և խաղի մեջ մտնելու համար տեսանելիորեն շարժվի
Նոր տեքստ
• գնդակը պետք է տեղադրված լինի անկյունային սեկտորում • գնդակը պետք է անշարժ տեղադրված լինի և ոտքով հարվածը պետք է կատարվի հարձակվող թիմի խաղացողի կողմից • գնդակը խաղի մեջ է, երբ դրան հարվածում են ոտքով և այն տեսանելիորեն շարժվում է (…)

Բացատրություն

- Աղեղ բառը փոխարինվել է սեկտոր բառով
- Հստակեցվում է, որ գնդակը պետք է անշարժ լինի
- Այս փոփոխությունը համահունչ է մնացած Կանոններին: Սա հատկապես կարևոր է անկյունային հարվածների ժամանակ, որպեսզի վերջ դրվի «ոչ ազնիվ» այն դեպքերին, երբ խաղացողը թեթևակի դիպչում է գնդակին, այնուհետև իր գործողություններով ցույց տալիս թե իբր հարվածը դեռ չի կատարվել: